


ՀՀ ԴԵՍՊՈԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ





Ձեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՅԿ) ՅԿ-ի կողմից Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Ձեկույցի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետը:

ՀՏԴ 327.82(479.25)

ԳՄԴ 66.49(53)

Հ 247

Փորձագետ՝ Շուշանիկ Ավագյան
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Ավագյան

Հ 247 ՀՀ դիվանագիտությունների հրապարակային գործունեության վերաբերյալ դիտարկումներ.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՅԿ, 2024.- 70 էջ:

Հետազոտությունը փորձ է գնահատելու Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության արդյունավետությունը Եվրոպայում գործող դեսպանությունների օրինակով՝ հիմք ընդունելով միջպետական հարաբերությունների զարգացման և ազգային շահերի առաջնության գործում նրանց կատարողականի հանրային տիրույթում հասանելի ցուցանիշները:

ՀՏԴ 327.82(479.25)

ԳՄԴ 66.49(53)

ISBN 978-9939-1-2110-9

© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՅԿ

www.transparency.am

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ԱՄՓՈՓԱԳԻՐ	4
ՆԱԽԱԲԱՆ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	10
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	15
Փոխադարձ այցեր	15
Իրավապայմանագրային շրջանակ	19
Ապրանքաշրջանառություն	20
Հանրային դիվանագիտություն	22
Դեսպանընկալ պետության տեսանելի գործողություններ և արդյունքներ	27
Մարդկային ռեսուրսներ	28
Նյութական ռեսուրսներ	29
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	34
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	70

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԳԴՀ	Գերմանիայի դաշնային հանրապետություն
ԴՆ	դիվանագիտական ներկայացուցչություններ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպայի միություն
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ՀԴ	հանրային դիվանագիտություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է գնահատել, թե որքանով են ՀՀ դեսպանությունները արդյունավետ իրականացնում իրենց առջև դրված լիազորությունները՝ ներկայացնելու Հայաստանը, պաշտպանելու ազգային և քաղաքացիական շահերը, խթանելու երկկողմ համագործակցությունը և ապահովելու Հայաստանի շահերի արտահայտումը միջազգային հարթակներում:

Հետազոտության շրջանակը ներառում է ՀՀ դեսպանությունների գործունեությունը եվրոպայի 40 երկրներում՝ դիտարկելով 2018–2023 թթ. ժամանակահատվածը:

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է թե՛ քանակական, թե՛ որակական ցուցանիշներ: Դիտարկվել են պաշտոնական փոխայցելությունների ինտենսիվությունը, երկկողմ պայմանագրային բազան, առևտրաշրջանառության վիճակագրությունը, սոցիալական մեդիայի միջոցով հանրային դիվանագիտության դրսևորումները, ինչպես նաև դեսպանընկալ պետությունների արձագանքները Հայաստանի համար առանցքային իրադարձությունների վերաբերյալ: Լրացուցիչ ուսումնասիրվել են դեսպանությունների մարդկային և նյութատեխնիկական հնարավորությունները:

Տվյալների հավաքագրումը կատարվել է բաց աղբյուրներից՝ պաշտոնական կայքերին և սոցիալական հարթակներին հետևելով, ԱԳՆ-ին ուղղված հարցումների, հաշվետվությունների և լրատվամիջոցների վերլուծության միջոցով:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում առկա են համակարգային թերություններ՝ ռազմավարական ուղղվածության բացակայությունից մինչև արդյունավետության գնահատման մեխանիզմների անգործությունը: Դեսպանությունների գործունեությունը խիստ անհամաչափ է, հաճախ կախված է անձնական նախաձեռնողականությունից և տեխնիկական հնարավորություններից: Բացակայում է նաև հանրային դիվանագիտության նպատակային ռազմավարություն՝ հիմնված մշակույթի, կրթության, գիտության, ներդրումների և հանրային կապերի զարգացմամբ Հայաստանի միջազգային պատկերը համակարգված ներկայացնելու վրա:

Հետազոտության արդյունքում վերհանված վերոնշյալ և այլ խնդիրների հասցեագրման նպատակով մշակվել են մի շարք առաջարկություններ:

Արտաքին քաղաքականության ռազմավարության ձևավորում և գնահատման համակարգի ներդրում

1. Հստակեցնել արտաքին քաղաքականության նպատակներն ու առաջնահերթությունները՝ սահմանելով առաջընթացի չափման ցուցանիշներ:
2. Ներդնել նպատակային ռազմավարություն՝ ուղղված դեսպանընկալ պետություններում Հայաստանի Հանրապետության նկատմամբ հետաքրքրության ամրապնդմանը, վստահելի հարաբերությունների հաստատմանը առանցքային պետական և ոչ պետական դերակատարների հետ, Հայաստանի շահերի հետևողական առաջխաղացմանը:
3. Ռազմավարությամբ նախատեսել հանրային դիվանագիտության առանձին ուղղություն և միջոցառումներ՝ նպաստելու Հայաստանի համար առանցքային արժեքների, սկզբունքների, դիրքորոշումների և նարատիվների/խոսույթների ակտիվ ու

- հետևողական առաջխաղացմանը՝ այդ թվում մշտական աշխատանք տանելով տեղական քաղաքական գործիչների, լրագրողների, վերլուծական կենտրոնների, ինչպես նաև հանրային կարծիք ձևավորող կարևոր դերակատարների հետ՝ ապահովելով վերջիններիս տեղեկացվածությունն ու ներգրավվածությունը Հայաստանի արտաքին քաղաքականությամբ պայմանավորված առանցքային հարցերի քննարկումներում ու հրապարակային արտահայտվող կարծիքներում:
4. Մշակել դեսպանությունների կատարողականի մոնիտորինգի և գնահատման պլան և արդյունքային ցուցանիշներ, որի հիման վրա պարբերաբար (այդ թվում՝ դեսպանությունների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունների հիման վրա) գնահատել ՀՀ դեսպանությունների և ԱԳՆ առնչվող ստորաբաժանումների գործունեությունը, ինչը թույլ կտա ինչպես արձանագրել արդյունավետ աշխատանքը, այնպես էլ արագ արձագանքել համակարգային թերացումներին՝ ընդհուպ գնահատելով առանձին երկրներում դեսպանություն ունենալու նպատակահարմարությունը:
 5. Մոնիտորինգի շրջանակում նախատեսել դեսպանությունների կատարողականի ընթացիկ վերահսկողության մեխանիզմներ, այդ թվում՝ եռամսյակային, իսկ որոշ արտակարգ (օրինակ՝ ռազմական էսկալացիա) իրավիճակներում՝ ընդհուպ շաբաթական հաշվետվությունների հիման վրա:
 6. Ձևավորել միջպետական պայմանագրերի իրականացման վերահսկողության մեխանիզմներ՝ հետամուտ լինելու և գնահատելու փաստաթղթերի իրականացման ընթացքը, արդյունավետությունը և, ըստ անհրաժեշտության, վերանայելու դիվանագիտական հետագա գործողությունները:

Դիվանագիտական հարթակների թվային կառավարման և հանրային հաղորդակցության զարգացում

7. Միասնականացնել դեսպանությունների կայքերի կառուցվածքը և ոճը:
8. Մի քանի երկիր ծածկող դեսպանությունների կայքերում ապահովել առանձին բաժին յուրաքանչյուր երկրի համար:
9. Հնարավորինս ապահովել տվյալ երկրում մայրենի/գործածական լեզվի կիրառումը սոցիալական հարթակներում:
10. Ապահովել տեխնիկական խնդիրների արագ արձագանքում, բովանդակության արդիականացում, թարմացումների հաճախականության գնահատում և դիտումների վիճակագրական վերլուծություն:
11. Դեսպանությունների կայքերում տեղադրել հղումներ դեպի սոցիալական մեդիայի պաշտոնական հարթակներ՝ ապահովելով տվյալների պահպանում, արխիվացում:
12. Ապահովել մանրամասն և արդիական տեղեկատվություն՝ հանդիպումների, ստորագրված համաձայնագրերի, դրանց իրականացման ընթացքի, մշակույթի, Հայաստանի կարևոր իրադարձությունների, զարգացումների վերաբերյալ:
13. Կայքում ներկայացնել մարդկային պատմություններ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում Հայաստանի և ընդունող երկրի ականավոր գործիչների՝ երկկողմանի, ոչ պարտադիր դիվանագիտական, հասարակական արդյունավետ շփումների հաջողության պատմությունները:

Մարդկային ռեսուրսների կառավարում

14. Վերլուծել ներկայիս մարդկային ռեսուրսների բաշխվածությունը, կարողություններն ու ծանրաբեռնվածությունը՝ այն համապատասխանեցնելով պետությունների կարևորության, դեսպանությունների ծածկույթի և գործունեության ծավալին՝ ապահովելու արդյունավետ համագործակցություն, ինչպես նաև հակազդելու հակահայ քարոզչությանը, ապատեղեկատվությանը, ինչպես նաև իրականացնելու օժանդակ գործառնություններ, այդ թվում՝ դեսպանությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն:
15. Հրապարակել դիվանագիտական և վարչական անձնակազմի թվային տվյալները կամ հստակորեն հիմնավորել, թե տեղեկատվության սահմանափակումը ինչ ռիսկեր է պարունակում Հայաստանի ազգային շահերի տեսանկյունից:
16. Իրականացնել պարբերական վերապատրաստումներ ռազմավարական պլանավորման, այդ թվում մոնիտորինգի և գնահատման, հանրային հաղորդակցության և թվային գործիքների կիրառման ոլորտներում:

Ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ

17. Ստեղծել սփյուռքահայ համայնքի ներգրավման հարթակներ՝ նպատակ ունենալով առաջ մղել, խթանել, ակտիվացնել Հայաստանի հանրային դիվանագիտությունը:

ՆԱԽԱԲԱՆ

Արտաքին հարաբերություններն ու դիվանագիտական ծառայությունը պետական կառավարման և հանրային ծառայության առավել պակաս թափանցիկ ոլորտներից են: Այս բնագավառների պատասխանատու ինստիտուտների աշխատանքը օբյեկտիվորեն հաճախ իրականանում է փակ դռների ետևում, ինչը զգալիորեն սահմանափակում է հանրային վերահսկողության և հաշվետվողականության հնարավորությունները: Սակայն ժողովրդավարական հասարակություններում անհրաժեշտ է ապահովել պետական ինստիտուտների գործունեության թափանցիկության որոշակի մակարդակ, ինչը թույլ կտա հանրությանը վերահսկել այս ոլորտներում տարվող քաղաքականությունը:

Սույն հետազոտությունը փորձ է գնահատելու Հայաստանի Հանրապետության (ՀՀ) դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության արդյունավետությունը Եվրոպայում գործող դեսպանությունների օրինակով՝ հիմք ընդունելով միջպետական հարաբերությունների զարգացման և ազգային շահերի առաջնորդման գործում նրանց կատարողականի հանրային տիրույթում հասանելի ցուցանիշները:

Ակնկալում ենք, որ հետազոտության արդյունքում վերհանված խնդիրները և վերլուծության արդյունքում ներկայացվող առաջարկությունները պատշաճ արձագանք կստանան ՀՀ արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) կողմից և կնպաստեն ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների արդյունավետության բարձրացմանը ինչպես Եվրոպայում, այնպես էլ այլ երկրներում: Նաև հուսով ենք, որ հետազոտության մեթոդաբանությունը ինչպես կխթանի արտաքին գործերի գերատեսչության կողմից դիվանագիտական ներկայացուցչությունների կատարողականի գնահատման մեխանիզմների մշակումը, այնպես էլ կօժանդակի արտաքին՝ խորհրդարանական վերահսկողությանը և գործադիրի պատշաճ հաշվետվողականությանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունները ծառայում են որպես հիմնական օղակ իրենց երկրների շահերի առաջնորդման, երկկողմ և բազմակողմ հարաբերությունների խթանման և արտերկրում քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում, ինչն ի վերջո նպաստում է նրանց ազգային անվտանգության ամրապնդմանը:

Պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների, նրանց իրավունքների և պարտականությունների հիմքում ընկած է ՄԱԿ-ի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» (Վիեննա, 1961) կոնվենցիան, որի 3-րդ հոդվածի համաձայն *«դիվանագիտական ներկայացուցիչների առաքելությունն է ներկայացնել ուղարկող պետությանը ընդունող պետությունում, ընդունող պետությունում միջազգային իրավունքով թույլատրված սահմաններում պաշտպանել ուղարկող պետության և նրա քաղաքացիների շահերը, բանակցություններ վարել ընդունող պետության կառավարության հետ, բոլոր օրինական միջոցներով պարզել ընդունող պետության պայմաններն ու վարձագումները և այդ մասին պեկուցել ուղարկող պետության կառավարությանը, խթանել ուղարկող պետության և ընդունող պետության միջև բարեկամական հարաբերությունները և վարձացնել նրանց տնտեսական, մշակութային և գիտական հարաբերությունները»*:¹

Հայաստանի Հանրապետության հիմնական իրավական փաստաթուղթը՝ Սահմանադրությունը, սահմանում է միջազգային իրավունքը՝ որպես արտաքին քաղաքականության հիմք. *«Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»*:²

Միաժամանակ ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական իրավական հիմքը «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքն է, ըստ որի դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ *«միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացնելը, միջազգային հարաբերություններում ՀՀ շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը»*:³

ՀՀ դիվանագիտական ծառայության մաս են կազմում ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ օտարերկրյա պետություններում գործող ստորաբաժանումները՝ դեսպանությունները, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները:⁴

¹ Vienna Convention on Diplomatic Relations, 1961, United Nations, Treaty Series, vol. 500, p. 95 https://legal.un.org/ilc/texts/instruments/english/conventions/9_1_1961.pdf (դիտված՝ 09.01.2024 թ.):

² ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>

³ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք, 24.10.2001 թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75809>

⁴ Նույն տեղում, հոդված 5, կետ 3:

ՀՀ միջպետական հարաբերությունների համար պատասխանատու հիմնական կառույցների՝ դեսպանությունների գործառույթներն են՝

- 1) «ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան օտարերկրյա պետությունում (այսուհետ՝ դեսպանընկալ պետություն) և ապահովել պաշտոնական հարաբերություններն այդ պետության հետ.
- 2) խրախուսել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության ու դեսպանընկալ պետության միջև բարեկամական հարաբերությունները և նպաստել փոխշահավետ կապերի վարձագմանը քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում.
- 3) պաշտպանել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը դեսպանընկալ պետությունում.
- 4) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.
- 5) նպաստել դեսպանընկալ պետության հետ կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.
- 6) վարել բանակցություններ դեսպանընկալ պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների հետ.
- 7) իրականացնել միջազգային իրավունքի նորմերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հյուպատոսական գործողություններ.
- 8) օրինական միջոցներով հավաքել, մշակել ու Կառավարությանը տրամադրել տեղեկություններ դեսպանընկալ պետությունում տեղի ունեցող իրադարձությունների, քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին.
- 9) նպաստել Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության հայ համայնքի համակողմանի կապերի ամրապնդմանն ու վարձագման».⁵

Հետազոտության նպատակն է գնահատել դեսպանությունների գործունեությունը՝ պարզելու, թե որքանով են արդյունավետ նրանք իրականացնում իրենց առջև դրված նպատակները:

Հետազոտության արդյունքները միաժամանակ վեր են հանում ներկայիս դիվանագիտական պրակտիկայի որոշ թույլ կողմեր, ինչը հիմք է տալիս խորհել դիվանագիտական ռազմավարությունների և գործողությունների հնարավոր բարելավումների մասին և կատարելագործել արտաքին գործերի գերատեսչության կատարողականի գնահատման համակարգը՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի միջազգային վարկանիշն ու ազդեցությունը:

⁵ Նույն տեղում, հոդված 12, կետ 1:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդը

Հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է՝ համատեղելով ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ:

Հետազոտության առանցքում ՀՀ դեսպանությունների՝ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1), 2) և 4) կետերով սահմանված գործառույթներն են և դրանց կատարողականի ցուցանիշները: Ընտրված ցուցանիշներն արտացոլում են՝

1. դեսպանընկալ պետությունների հետ պաշտոնական հարաբերությունները/կապերը, որտեղ դիտարկվել է առանցքային ղեկավար պաշտոնյաների (նախագահ, վարչապետ, խորհրդարանի նախագահ/խոսնակ, ԱԳ նախարար) փոխայցելությունների քանակը/մակարդակը,
2. ՀՀ ու դեսպանընկալ պետության միջև պայմանագրային հարաբերությունները/կապերը, որտեղ դիտարկվել է երկկողմ պայմանագրերի առկայությունը,
3. ՀՀ և դեսպանընկալ պետությունների միջև տնտեսական կապերը, մասնավորապես՝ առևտրաշրջանառությունը, որտեղ սակայն անդրադարձ չի կատարվել դրանում դեսպանությունների դերակատարմանը,
4. ՀՀ դեսպանությունների հանրային դիվանագիտությունը, մասնավորապես՝ Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության, մշակութային ու տնտեսական հարցերի ներկայացումը դեսպանընկալ պետության հանրությանը սոցիալական մեդիայի միջոցներով,
5. դեսպանընկալ պետությունների արձագանքը Հայաստանի համար առանցքային հարցերի շուրջ, որտեղ ուսումնասիրվել են օրենսդիր և գործադիր մարմինների կամ բարձրաստիճան անձանց պաշտոնական հայտարարությունները, մարդասիրական օգնությունը կամ այլ ներգրավվածությունը Հայաստանի կյանքում 2018-2023 թթ. տեղի ունեցած չորս առանցքային իրադարձություններին, որոնք են՝ 2020 Լեռնային Ղարաբաղի պատերազմը, 2022 սեպտեմբերյան հարձակումը Հայաստանի վրա, 2023 Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և 2023 Լեռնային Ղարաբաղի հայաթափումը,
6. ի լրումն կատարողականի ցուցանիշների՝ դեսպանությունների մարդկային ու գույքային ռեսուրսներով ապահովվածությունը նրանց գործունեության արդյունավետությունն առավել արդարացիորեն գնահատելու նպատակով:

Աշխարհագրական շրջանակը

Հետազոտությունը ծածկում է եվրոպական երկրներում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների գործունեությունը՝ բացառությամբ Բելառուսի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Վրաստանի: Ընտրված շրջանակը կոնկրետ տարածաշրջանային համատեքստում է, և դիտարկված դեսպանությունների ջանքերն ու գործունեությունը որոշակիորեն համադրելի են, ինչը թույլ է տալիս առավել անսխալ և համեմատության մեջ գնահատելու նրանց կատարողականը: Միաժամանակ, կարծում ենք, որ վերհանված խնդիրներն ունիվերսալ են և վերաբերելի այլ տարածաշրջաններում գործող դեսպանություններին: Ուստիև խնդիրների լուծման և կատարողականի բարելավման նպատակով ներկայացվող առաջարկությունները կիրառելի կլինեն նաև այլ դեսպանությունների համար:

Աղյուսակ 1. Դիտարկված դեսպանությունների ցանկը, տեղակայումը և ծածկույթը

Դեսպանության նստավայր քաղաք	Դեսպանընկալ պետություններ	Միջազգային կառույցի ներկայացուցչություն
Աթենք	Հունաստանի Հանրապետություն (Հունաստան)	
	Կիպրոսի Հանրապետություն (Կիպրոս)	
	Ալբանիայի Հանրապետություն (Ալբանիա) ⁶	
Բեռլին	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Գերմանիա)	
	Լիխտենշտայնի Իշխանապետություն (Լիխտենշտայն)	
Բուխարեստ	Ռումինիա	
Բրյուսել	Բելգիայի Թագավորություն (Բելգիա)	ԵՄ
Ժնև	Շվեյցարիայի Համադաշնություն (Շվեյցարիա)	ՀՀ մշտական ներկայացուցչի ժնևի ՄԱԿ-ի գրասենյակում
Լոնդոն	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	
	Իռլանդիա	
Հաագա	Նիդերլանդների Թագավորություն (Նիդերլանդներ)	Զիմիական գենթի արգելման կազմակերպություն
	Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն (Լյուքսեմբուրգ)	
Հռոմ	Իտալիայի Հանրապետություն (Իտալիա)	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
	Մալթայի Հանրապետություն (Մալթա)	
Մադրիդ	Իսպանիայի Թագավորություն (Իսպանիա)	
	Անդորրա	
Պրահա	Չեխիայի Հանրապետություն (Չեխիա)	
	Խորվաթիայի Հանրապետություն (Խորվաթիա)	
	Սլովենիայի Հանրապետություն (Սլովենիա)	
	Սերբիայի Հանրապետություն (Սերբիա)	
	Չեռնոգորիա	
Սուրբ Աթոռ	Պորտուգալական Հանրապետություն (Պորտուգալիա)	
	Սուրբ Աթոռ/ Վատիկան	
	Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտ	
Սոֆիա	Բուլղարիայի Հանրապետություն (Բուլղարիա)	
Ստոկհոլմ	Շվեդիայի Թագավորություն (Շվեդիա)	
	Դանիայի Թագավորություն (Դանիա)	
	Ֆինլանդիայի Հանրապետություն (Ֆինլանդիա)	
	Նորվեգիայի Թագավորություն (Նորվեգիա)	
	Իսլանդիա	
Վարշավա	Լեհաստանի Հանրապետություն (Լեհաստան)	ԵԱՀԿ ԺՀՄԻԳ
Վիեննա	Ավստրիայի Հանրապետություն (Ավստրիա)	Ատոմային Էներգիայի միջազգային գործակալություն

⁶ Շեղատառերով գրված են ԵՄ անդամ երկրներ չհանդիսացող պետությունները:

	Սլովակիայի Հանրապետություն (Սլովակիա)	ԵԱՀԿ
		ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն
		Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա
		Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողով
Վիլնյուս	Լատվիայի Հանրապետություն (Լատվիա)	
	Էստոնիայի Հանրապետություն (Էստոնիա)	
	Լիտվայի Հանրապետություն (Լիտվա)	
Փարիզ	Ֆրանսիայի Հանրապետություն (Ֆրանսիա)	Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն
	Մոնակոյի Իշխանություն (Մոնակո)	

Ինչպես երևում է աղյուսակից, դեսպանությունների ծածկույթը խիստ տարբեր է: Օրինակ՝ Սոֆիայի և Բուխարեստի դեսպանությունները ապահովում են միայն համապատասխանաբար Բուլղարիայի և Ռումինիայի հետ երկկողմ հարաբերությունները, մինչդեռ Ստոկհոլմի և Պրահայի դեսպանությունները ծածկում են հնգական երկիր, առաջինը՝ Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Դանիան և Իսլանդիան, իսկ երկրորդը՝ Չեխիան, Սլովենիան, Խորվաթիան, Սերբիան և Չեռնոգորիան:

Որոշ դեսպանընկալ պետություններում/քաղաքներում (օրինակ՝ Բրյուսել, Յոն, Վիեննա, Վարշավա, Ժնև, Հաագա) ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները ծածկում են սաև դրանցում տեղակայված միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունները:

Հետազոտությունն անդրադարձել է բացառապես պետությունների միջև երկկողմ հարաբերություններին:

Դիտարկված ժամանակահատվածը

Հետազոտության թիրախում հիմնականում 2018-2023 թթ. ժամանակահատվածն է՝ հաշվի առնելով 2018 թ-ից հետո արտաքին քաղաքականության էական փոփոխությունները: Միաժամանակ, առանձին ցուցանիշների գնահատման համար օգտագործվել են տարբեր մոտեցումներ: Այսպես, օրինակ՝ պաշտոնական կապերի և տնտեսական գործունեությանն առնչվող ցուցանիշների համար կատարված է համեմատական վերլուծություն՝ համադրելով տվյալները մինչև 2018 թ. ունեցած պատկերի հետ: Սոցիալական մեդիաներում հրապարակային գործունեության ուսումնասիրությունն ընդգրկում է 2021 թ-ի հունիսի արտահերթ ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածը:

Տեղեկության հավաքագրման եղանակներն ու աղբյուրները

Հետազոտության նպատակով ուսումնասիրվել են միջազգային և ներպետական իրավական հիմքերը: Միջազգային մակարդակում դիտարկվել են ՄԱԿ-ի կանոնադրությունը (1945) և «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիան (1961), որոնք ընկած են ներկայիս աշխարհակարգում պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հիմքում: Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և երկրի դիվանագիտական գործունեությունը կարգավորող մի շարք օրենսդրական ակտեր, ներառյալ՝ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը (24.10.2001), «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (01.03.2023), «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը (28.07.2000), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը (23.03.2018) և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքը (23.03.2018):

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկությունը հավաքագրվել է 2024 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին տարբեր եղանակներով, այդ թվում՝

- պաշտոնական կայքերի և սոցիալական հարթակների դիտարկում, որը ներառել է ՀՀ ԱԳՆ և հետազոտության շրջանակի դեսպանությունների կայքերը, ինչպես նաև Meta-ն (Նախկինում և այսուհետ՝ Ֆեյսբուք (Facebook)) և X-ը (Նախկինում և այսուհետ՝ Թվիթեր (Twitter)), սոցիալական հարթակներում գործող օգտահաշիվները,
- ԱԳՆ-ին ուղղված պաշտոնական հարցումները դիվանագիտական գործունեության վերաբերյալ կոնկրետ քանակական տվյալներ ստանալու նպատակով,
- ՀՀ ԱԳՆ գործունեության տարեկան հաշվետվությունները,
- հանրությանը հասանելի աղբյուրներում ամկա բաց տվյալները, այդ թվում՝ լրատվամիջոցների նյութերը և միջազգային հրապարակումները:

Աղյուսակ 2. Տվյալների հավաքագրման մեթոդների համար օգտագործված կոդեր

Տվյալների հավաքագրման մեթոդ	Կոդ
ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքի ուսումնասիրություն	W
Դիվանագիտական ներկայացուցչության ինտերնետային կայքի ուսումնասիրություն	E
Սոցիալական հարթակներում դիվանագիտական ներկայացուցչությունների օգտահաշիվների ուսումնասիրություն	S
ՀՀ ԱԳՆ ուղղված պաշտոնական հարցումների պատասխաններ	R
Համացանցային այլ ռեսուրսներ	I

Տվյալների հավաքագրման մեթոդները հիմք են ծառայել դիտարկվող ցուցանիշների վերլուծությանը՝ հնարավորություն տալով համադրելի ու բազմակողմանի պատկերացում կազմելու դեսպանությունների գործունեության վերաբերյալ: Ստորև՝ Աղյուսակ 3-ում, ներկայացված են ուսումնասիրված հիմնական ցուցանիշները, դրանց չափման միավորները և համապատասխան տվյալների հավաքագրման մեթոդները:

Աղյուսակ 3. Դիտարկված ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Տվյալների հավաքագրման մեթոդ
1	Փոխադարձ պաշտոնական այցելություններ (1991-2018, 2018-2023)		
	Պետության ղեկավար պաշտոնյաների (նախագահ, վարչապետ, ԱԳ նախարար, ԱԺ նախագահ) փոխադարձ այցելություններ	Քանակ Տոկոսային հարաբերակցություն	W+E
2	Ստորագրված պայմանագրեր (1991-2018, 2018-2023)		
	1991 թ.-ից ի վեր կնքված պայմանագրերի քանակ, որում 2018-2023 թ.-ից հետո կնքված պայմանագրերի տոկոսային հարաբերակցություն	Քանակ	W+E
3	Տնտեսական կապեր (1991-2018, 2018-2023)		
	Ապրանքաշրջանառություն	Մեծություն Տոկոսային հարաբերակցություն	W+E
4	Հանրային դիվանագիտություն (2021 -2023)		
4.1	Խողովակներ		
4.1.1	Դեսպանության ինտերնետային կայք	Առկայություն	W+S
4.1.2	Դեսպանության օգտահաշիվ Ֆեյսբուք հարթակում	Առկայություն	W+S
4.1.3	Դեսպանության օգտահաշիվ Թվիթեր հարթակում	Առկայություն	W+S
4.2	Առանցքային թեմաներ (2021 հուլիսից - 2023)		
4.2.1	1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակումներ	Քանակ	W+S
4.2.2	Հայկական մշակույթի վերաբերյալ հրապարակումներ	Քանակ	W+S
4.2.3	Տուրիզմի զարգացման ուղղված հրապարակումներ	Քանակ	W+S
5	Դեսպանընկալ պետության տեսանելի գործողություններ (2021 հուլիսից - 2023)		
5.1	2020 սեպտեմբերի պատերազմ Լեռնային Ղարաբաղում	Քանակ	I
5.2	2022 սեպտեմբերի հարձակում Հայաստանի վրա	Քանակ	I
5.3	2023 Լեռնային Ղարաբաղի շրջափակում	Քանակ	I
5.4	2023 Լեռնային Ղարաբաղի հայաթափում	Քանակ	I
6	Ռեսուրսներ		
6.1	Մարդկային ռեսուրսներ		
6.1.1	Դիվանագիտական ներկայացուցչությունում ընդհանուր հաստիքների քանակ, այդ թվում՝ դիվանագետների և ոչ դիվանագիտական հաստիք զբաղեցնող անձանց քանակ	Քանակ Տոկոսային հարաբերակցություն	R
6.2	Նյութական ռեսուրսներ		
6.2.1	Դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցրած տարածքը համարվում է ՀՀ սեփականություն, տրված է վարձակալության հիմունքներով, թե տրված է անհատույց օգտագործման պայմանագրի հիման վրա	Կարգավիճակ	R

Հետազոտության սահմանափակումները

Հետազոտության մեթոդն ունեցել է մի շարք սահմանափակումներ: Մասնավորապես՝

- Հետազոտությունն իրականացվել է բաց աղբյուրներում առկա և ՀՀ ԱԳՆ-ից ստացված տվյալների հիման վրա, ինչի արդյունքում հնարավոր չէ համապարփակ գնահատել դեսպանությունների գործունեության ամբողջ ծավալը և արդյունավետությունը: Ակնհայտ է, որ դիվանագիտական կառույցների գործառնությունները մեծապես ընդգրկում են ծառայողական կամ գաղտնի բնույթի տեղեկատվություն, որը սահմանափակ հասանելիություն ունի ինչպես արտաքին, այնպես էլ հետազոտական շրջանակների համար:
- անդրադարձ չի կատարվել այն աշխարհաքաղաքական գործոններին, որոնք կարող էին խթանել կամ հակառակ ազդեցություն ունենալ դեսպանությունների գործունեության վրա,
- չեն ուսումնասիրվել դիվանագիտական կորպուսի փոփոխությունները կամ կատարողականի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ ներքին գործընթացները,
- հաշվի չի առնվել հայկական սփյուռքի գործոնը և դրա դերը տնտեսական հարաբերություններում կամ դեսպանընկալ պետությունների քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործում,
- հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ դեսպանն ու դիվանագիտական կորպուսը հաճախ ծառայություն են իրականացնում մի քանի երկրում կամ ներգրավված են նաև միջազգային միջպետական կառույցների աշխատանքներին, ինչով պայմանավորված նրանց կատարողականը կարող է տարբերվել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փոխադարձ այցեր

Պետական մակարդակով բարձրաստիճան պաշտոնական այցերը կարևորագույն դեր ունեն պետությունների միջև երկկողմ հարաբերությունների ձևավորման, պահպանման և ամրապնդման գործում: Դրանք հարթակ են ապահովում միջազգային համաձայնագրերի պաշտոնականացման համար տարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ համագործակցությունը քաղաքական, տնտեսական և անվտանգային ոլորտներում և մշակութային կապերը՝ դրանով ամրապնդելով դիվանագիտական բանակցությունների արդյունքները:

Միջպետական այցերը նպաստում են պետությունների միջև վստահության ձևավորմանն ու ամրապնդմանը հատկապես զգայուն հարցերի կամ ճգնաժամերի դեպքում: Որպես կանոն, դրանք լայնածավալ լուսաբանում են ստանում լրատվամիջոցներում՝ հնարավորություն տալով առաջնորդներին անմիջականորեն ազդել հանրային կարծիքի վրա և ստանալ քաղաքական նախաձեռնությունների վերաբերյալ հավանություն:


Իրենց բացահայտ նշանակությունից զատ, պետական մակարդակով այցերը թաքնված նշանակություն ունեն երկկողմ հարաբերություններում: Դրանք կարող են ազդարարել ռազմավարական դաշինքների ձևավորման կամ ամրապնդման մասին՝ ազդելով տարածաշրջանային ուժային դինամիկան փոխելու, դաշինքներն ամրապնդելու կամ աշխարհաքաղաքական նոր մոտեցումներ ձևավորելու վրա: Հարաբերությունների

ճգնաժամերի ժամանակ պետական մակարդակով այցելությունները վճռորոշ դեր են խաղում դրանց կառավարման և լարվածության թուլացման գործում: Առաջնորդների միջև անմիջական շփումը կարող է օգնել կանխել թուրիմացությունները կամ սխալ մեկնաբանությունները, որոնք հակառակ դեպքում կարող են սրել լարվածությունը:

Երկկողմ հարաբերությունների ակտիվացման և զարգացման գործում առանցքային դերակատարում ունեն դեսպանությունները, որոնք ծառայում են որպես դիվանագիտական կապերի միջնորդներ: Այցի նախապատրաստական աշխատանքը ներառում է բանակցություններ, մանրամասն պլանավորում, փաստաթղթերի համաձայնեցում, արարողակարգային կանոնների վերահսկում և միջոցառումների կազմակերպում: Արդյունքում, նախապատրաստական աշխատանքներն ունեն թե՛ տեխնիկական, թե՛ ռազմավարական կարևորություն՝ ապահովելով փոխադարձ այցերի արդյունավետությունը և դրանց ազդեցությունը երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Հավելված 1-ում ներկայացված է ՀՀ և Եվրոպական երկրների միջև փոխանակված այցերի քանակը 1991-ից մինչև 2018 թ-ը և 2018 թ-ից հետո, որը ներառում է պետության առաջին և երկրորդ դեմքերի (նախագահ և վարչապետ), խորհրդարանների ղեկավարների/խոսնակների, ինչպես նաև արտաքին գործերի նախարարների պաշտոնյաների պաշտոնական այցերը: Հավելվածում առկա տվյալները ամփոփված են ստորև՝ Պատկեր 1, Պատկեր 2 և Պատկեր 3-ում:

Պատկեր 1. Օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների այցերը Հայաստան



Հետազոտության ժամանակահատվածում ՀՀ ԱԳՆ կայքում տեղեկություն առկա չէր Անդորրայի, Իռլանդիայի, Իսլանդիայի, Լիխտենշտայնի, Հյուսիսային Մակեդոնիայի, Մոնակոյի, Սան Մարինոյի վերաբերյալ: Մյուս երկրների և Հայաստանի միջև փոխադարձ այցելությունների քանակը 2018-ից հետո զգալիորեն աճել է՝ համեմատած 1991-2017 թթ. ժամանակահատվածի հետ:

Եվրոպական երկրների բարձրաստիճան պաշտոնյաների այցերը Հայաստան

1991 թ.-ից ի վեր Հայաստան կատարված այցերի թվով առաջատար են Ֆրանսիան (17), Լիտվան (16), Ռումինիան (16), Լեհաստանը (13), Չեխիան (12), Բուլղարիան (11), Գերմանիան (11), Չինաստանը (11), Մեծ Բրիտանիան (11): Վերջին հինգ տարիների ընթացքում առավել շատ այցեր իրականացվել են Ֆրանսիայի (8), Լիտվայի (5), Գերմանիայի (4), Իտալիայի (3), Չինաստանի (3), Մեծ Բրիտանիայի (3), Ռումինիայի (3), Սուրբ Աթոռի (3), Սլովակիայի (3) և Շվեդիայի (3) բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: 2018թ.-ից հետո այցերի համամասնությունը ընդհանուրի մեջ առավել մեծ է Մայթայի (100 %), Ֆրանսիայի (47 %), Շվեդիայի (42 %), Գերմանիայի (36 %) և Լիտվայի (31 %) դեպքում:


Չնայած ընդհանուր ցուցանիշներում բարձր թվերին՝ որոշ երկրներից դեպի Հայաստան այցերի հաճախականությունը վերջին հինգ տարիներին նվազել է: Այսպես, ընդհանուր այցերի քանակի մեջ 2018-2023 թթ.-ին Լեհաստանից (13) եղել է ընդամենը 1 այց, Չեխիայից (12)՝ 1, Բուլղարիայից (11)՝ 2 և Ռումինիայից (16)՝ 3 այց:

Նույն ժամանակահատվածում ԱԳՆ կայքում այցերի մասով տեղեկատվություն առհասարակ առկա չէ Ալբանիայի, Անդորրայի, Իռլանդիայի, Իսլանդիայի, Լիխտենշտայնի, Մոնակոյի և Սան Մարինոյի պաշտոնական այցերի վերաբերյալ:

Իսպանիայից, Լատվիայից, Շվեյցարիայից, Պորտուգալիայից և Դանիայից 2018-ից մինչև 2023 թ. դեկտեմբեր որևէ բարձրաստիճան պաշտոնական այց չի իրականացվել:

ՀՀ պաշտոնյաների բարձրաստիճան այցերը եվրոպական երկրներ

Պատկեր 2. ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների այցերը եվրոպական երկրներ




Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանն առավել հաճախ դիվանագիտական այցեր է իրականացրել Ֆրանսիա (64), Գերմանիա (35), Բելգիա (25), Մեծ Բրիտանիա (24), Շվեյցարիա (23) և Լեհաստան (23): Այս երկրները եղել են ոչ միայն առաջնային գործընկերներ ընդհանուր ցուցանիշներով, այլև շարունակել են մնալ այդպիսին վերջին 5 տարիների կտրվածքով:

2018-2023 թվականներին առավել հաճախակի այցեր կատարվել են Ֆրանսիա (20), Գերմանիա (9), Մեծ Բրիտանիա (6), Շվեյցարիա (6) և Բելգիա (5): Սա վկայում է այն մասին, որ Հայաստանի դիվանագիտական ներկայությունը Եվրոպայում հիմնականում կենտրոնացած է այս երկրների շուրջ:

Չնայած դեպի որոշ երկրներ այցերի ընդհանուր մեծ քանակին, դրանց մեջ փոքրաթիվ են վերջին 5 տարում կատարված այցերը: Այսպես, ՀՀ պաշտոնյաների կողմից 2018-2023 թթ.-ի ընդհանուր այցերի քանակի մեջ դեպի Ռումինիա (22), Լատվիա (11) և Էստոնիա (8) կատարվել են ընդամենը 1-ական այցեր:

Վերլուծության արդյունքներով Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Հունգարիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Չեռնոգորիա երկրներում 2018-2023 թվականներին որևէ այց չի գրանցվել: Սա կարող է վկայել այն մասին, որ դիվանագիտական հետաքրքրությունը կամ համագործակցության մակարդակը այս երկրների հետ մնում է նվազագույնի վրա:

Պատկեր 3. Փոխայցելությունների ժամանակային դինամիկան



Փոխադարձ այցելությունների քանակական վերլուծությունը վեր է հանում Հայաստանի և Եվրոպական երկրների միջև ներգրավվածության տարբեր աստիճանները և դինամիկան: Մինչ որոշ երկրների հետ տարիների ընթացքում պահպանվել է փոխգործակցության հետևողական մակարդակ կամ աճ, մյուսների հետ փոխայցելությունների քանակը նվազել է:

Ակնհայտ է, որ առավել ակտիվ հարաբերություններ պահպանվում են այն երկրների հետ, որտեղ ՀՀ-ն ունի դեսպանություններ: Սակայն այն երկրներում, որոնք ընդգրկված են ՀՀ

դեսպանությունների ծածկույթում, բայց չունեն ուղղակի դիվանագիտական ներկայություն, փոխայցելությունների մակարդակը ցածր է (օրինակ՝ Ալբանիա, Լիխտենշտայն, Դանիա, Ֆինլանդիա, Լորվեգիա, Իռլանդիա, Իսլանդիա, Լատվիա, Էստոնիա, Մալթա, Խորվաթիա և այլն):

Թեև առանձին երկրների հետ ակտիվ հարաբերությունները հիմնավորվում են, այդ թվում՝ արժեքային, աշխարհաքաղաքական ուղղվածության կամ երկկողմանի այլ շահերի գործոններով, այլուց հետո պասիվ գործակցությունը չի հիմնավորվում կամ ամնվազն հասկանալի չէ:

Մի շարք երկրների հետ, ամենայն հավանականությամբ, կարող էին լինել առավել ակտիվ հարաբերություններ՝ հաշվի առնելով պատմամշակութային կապերը (օրինակ՝ Պորտուգալիա, Իտալիա, Ավստրիա, Լորվեգիա), ընդհանուր ժողովրդավարական արժեքները (օրինակ՝ Իռլանդիա, Իսլանդիա, Էստոնիա) կամ անվտանգությանն առնչվող տարբեր բնույթի հարցերը (օրինակ՝ Ֆինլանդիա, Յունգարիա), սակայն բավարար աշխատանք չի տարվել: Միաժամանակ, արդյունավետ աշխատանք չի տարվել այնպիսի պետությունների (օրինակ՝ Իտալիա, Իսպանիա, Բոսնիա Յերցեգովինա, Ալբանիա, Խորվաթիա, Ռումինիա, Չեխիա) հետ, որտեղ էական է Հայաստանի նկատմամբ թշնամական վերաբերմունք ունեցող երկրների, մասնավորապես՝ Ադրբեջանի ազդեցությունը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական, կրոնական կամ առևտրատնտեսական գործոնով:

Անշուշտ, դեսպանությունների ակտիվ գործունեությունը կարևոր է բարձրաստիճան այցեր կազմակերպելու հարցում, սակայն հավասարապես կարևոր է, թե տվյալ երկրի համար ինչ քաղաքական և տնտեսական կարևորություն ունի Հարավային Կովկասը և Հայաստանը՝ մասնավորապես, արդյոք այն դեսպանընկալ պետության օրակարգում է, թե՛ ոչ: Այցերի պակասը կարող է պայմանավորված լինել ոչ միայն դեսպանության աշխատանքի թերազմամբ, այլ նաև տվյալ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթություններով, ինչն այդուհանդերձ չի կարող հիմնավորել ներդրվող ջանքերի սահմանափակ լինելը:

Իրավապայմանագրային շրջանակ

Դիվանագիտական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը ծառայում է որպես միջազգային փոխգործակցության հիմնաքար՝ նպաստելով պետությունների միջև հաղորդակցությանը, բանակցություններին և համագործակցությանը ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին բնագավառներում: Միջազգային իրավունքի զարգացող սկզբունքների վրա սահմանվում են կանոններ, որոնցով պետությունները համագործակցում են միմյանց հետ: Դրանք ներառում են բազմաթիվ համաձայնագրեր, պայմանագրեր, հուշագրեր, արձանագրություններ, որոնք հիմք են ստեղծում խաղաղ գոյակցության, համագործակցության, փոխադարձ շահերի առաջնության և վեճերի լուծման համար: Փոխկապակցված աշխարհում, որտեղ դիվանագիտությունն անփոխարինելի դեր է խաղում բարդ գլոբալ մարտահրավերներին դիմակայելու համար, միջպետական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը ծառայում է որպես երկխոսության, վստահության խթանման և ընդհանուր խնդիրների հավաքական լուծումներ հետապնդելու կենսական գործիք:

Հավելված 2-ում ներկայացված են դիտարկվող պետությունների հետ հարաբերությունները կարգավորող իրավապայմանագրային փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ, որոնք ներառում են արձանագրություններ, հուշագրեր, համաձայնագրեր և այլ իրավաբանական փաստաթղթեր:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածում մի քանի պետությունների վերաբերյալ տվյալները ԱԳՆ կայքում բացակայել են: Դրանք են՝ Իռլանդիա, Իսլանդիա, Յյուսիսային Մակեդոնիա և Չեռնոգորիա: Այս երկրների հետ կնքված որևէ պաշտոնական փաստաթուղթ առկա չէ:

Մյուս պետությունների մեծամասնության դեպքում առկա տեղեկությունները թերի են, օրինակ՝ բացակայում են դրանց ստորագրման և/կամ վավերացման ամսաթվերը: Այդ երկրների շարքում են՝ Անդորրան, Ավստրիան, Գերմանիան, Դանիան, Էստոնիան, Իսպանիան, Լատվիան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտը, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Շվեդիան, Պորտուգալիան և Սուրբ Աթոռը: Լիտվայի պարագայում պայմանագրերը ներկայացված են այլ ձևաչափով՝ հակառակ ժամանակագրությամբ:

ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԱԳՆ-ն ներկայացրել է կայքի [«Միջազգային պայմանագրեր»](#) բաժնի հղումը, որը սակայն չի պարունակում 2018 թվականից հետո ստորագրված փաստաթղթերը: Առհասարակ՝ ՀՀ ԱԳՆ կայքում «Երկկողմ հարաբերություններ» բաժնում գետեղված իրավապայմանագրային փաստաթղթերը չեն համապատասխանում «Միջազգային պայմանագրեր» բաժնի՝ ըստ տարեթվերի դասակարգված պանակներում առկա փաստաթղթերին:

Պետք է նշել, որ հետազոտության շրջանակում չեն դիտարկվել մինչ 2018 թ. ստորագրված պայմանագրերում 2018-ից հետո կատարված փոփոխությունները: Եթե նման փոփոխություններ եղել են, դրանք ևս կարող են հանդիսանալ դեսպանությունների կամ ԱԳՆ-ի աշխատանքի արդյունք: Միաժամանակ, հասկանալի է, որ միջազգային պայմանագրերը չեն կարող անընդհատ կամ պարբերաբար կնքվել և առավել կարևոր է դրանց փաստացի իրականացումը, ինչը չի ուսումնասիրվել, այդ թվում՝ տեղեկատվության բացերի պատճառով:

Ապրանքաշրջանառություն

Դիվանագիտական հարաբերություններ հաստատած պետությունների միջև առևտուրը ծառայում է որպես միջազգային համագործակցության հիմնաքար՝ համեմատական առավելությունները (comparative advantage) օգտագործելու միջոցով խթանելով տնտեսական աճը, քաղաքացիների բարեկեցությունը, փոխադարձ շահերը, փոխըմբռնումը, երկկողմ հարաբերությունների խորացումը և աշխարհաքաղաքական կայունությունը: Առևտուրը ծառայում է որպես մարդկանց միջև կապերի և մշակութային փոխանակումների ամրապնդման կատալիզատոր, որը նպաստում է ազգերի միջև ավելի մեծ փոխըմբռնմանը և համագործակցությանը: Հեշտացնելով գաղափարների, տեխնոլոգիաների և նորարարությունների հոսքը՝ առևտուրը նպաստում է գիտելիքի և լավագույն փորձի տարածմանը, երկրների առաջընթացին և բարգավաճմանը: Առևտուրը նաև հարթակ է ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու և ընդհանուր նպատակներ հետապնդելու համար՝ սկսած շրջակա միջավայրի կայունությունից և հանրային առողջությունից մինչև աղբատության հաղթահարում և հակամարտությունների լուծում: Բազմակողմ առևտրային

բանակցությունների և համագործակցության միջոցով երկրները կարող են օգտագործել իրենց հավաքական ուժերը՝ լուծելու բարդ խնդիրները, որոնք դուրս են պետական սահմաններից՝ խթանելով ավելի ներառական և կայուն համաշխարհային տնտեսություն: Առևտրային համաձայնագրերը, որոնք բանակցվում են դիվանագիտական հարաբերությունների շրջանակներում, բիզնեսի համար կարող են ապահովել առավել կայուն և կանխատեսելի միջավայր՝ խրախուսելով փոխադարձ ներդրումները և ոլորացնելով շուկաների հասանելիությունը:

Թեև տնտեսական համագործակցությունը, մասնավորապես՝ ժողովրդավարական և ազատականացված տնտեսություն ունեցող երկրների միջև, կարող է և միանշանակ պայմանավորված չլինել դեսպանությունների ներգրավվածությամբ, այնուամենայնիվ որպես կանխավարկած է ընդունվել վերջիններիս որոշակի դերակատարումը, որը, միգուցե, կարիք ունի լրացուցիչ ստուգման:

Մասնավորապես՝ դեսպանությունները պետք է տարբեր հարթակներում ներկայացնեն երկրի ներդրումային, բիզնես վարելու, հարկային արտոնությունների և հարակից այլ պայմանները, կազմակերպեն գործարար խմբերի փոխայցելություններ, ապահովեն հայկական ընկերությունների ներկայությունը միջազգային ցուցահանդեսներին, խթանեն առևտրաարդյունաբերական պալատների համագործակցությունը, մասնակցեն բիզնես շրջանակների նախաձեռնած հանդիպումներին և այլն: Դեսպանությունների գործառնություն է նաև նստավայր երկրում պատվավոր հյուպատոսների թեկնածությունների առաջադրումը և վերջիններիս հետ սերտ աշխատանքը առևտրային կապերի ակտիվացման նպատակով: Կայացած դիվանագիտական համակարգ ունեցող երկրներում դեսպանություններում հաճախ առկա են առևտրի կամ տնտեսական հարցերով պատասխանատու դիվանագետներ կամ առևտրական ներկայացուցիչներ, ինչը ևս փաստում է, որ դեսպանությունները, եթե ոչ առանցքային, ապա առանցքայինին մոտ դեր ունեն երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում:

Հավելված 3-ում ներկայացված է եվրոպական երկրների հետ տնտեսական հարաբերությունների դինամիկան՝ հիմք ընդունելով ԱԳՆ կայքում առկա 2019 և 2023 թվականների ապրանքաշրջանառությունը:

ԱԳՆ կայքում, ինչպես և Հավելվածում բացակայում են մի շարք պետությունների հետ առևտրաշրջանառության վերաբերյալ ամբողջական տվյալները: Առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս բազմաթիվ երկրների հետ տնտեսական հարաբերությունների եական ակտիվացում 2023 թ-ին՝ 2019 թ. համեմատ:

Բացակայում են 2019 թ. ներմուծման տվյալները՝ Լեհաստանի, Չինաստանի, Մալդիվների, Պակիստանի, Չեխիայի և Սան Մարինոյի, իսկ 2023 թ. տվյալները՝ Լիխտենշտայնի, Սլովակիայի և Սան Մարինոյի հետ առևտրի վերաբերյալ: Հունգարիայի, Մալթայի Ինքնիշխան Ուխտի և Սուրբ Աթոռի հետ ապրանքաշրջանառության մասին որևէ տեղեկություն առկա չէ:

Ալբանիայում, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում, Իսլանդիայում նկատվում է դեպի Հայաստան ներմուծման անկում՝ 76.6 %-ից մինչև 94.2 %:

Արտահանման աճի տեմպերը տատանվում են մոտ 1.5-ից (Էստոնիա, Լեհաստան, Լիդերլանդներ) մինչև 10 անգամ (Իսպանիա, Կիպրոս): Միաժամանակ կան պետություններ, որոնց դեպքում Հայաստանից որևէ արտահանում չկա. դրանց շարքում են Սան Մարինոն, Բոսնիա և Հերցեգովինան: Նույն պատկերն էր Չեռնոգորիայում մինչ 2019 թ-ը, սակայն 2021 թ-ից պատկերը փոխվում է, ինչը հարաբերությունների նոր փուլի ակներև փոփոխություն է:

Հետազոտությունը չի վերլուծել տնտեսական դինամիկայի պատճառները և դրանց կապը դեսպանությունների աշխատանքի հետ: Նաև չի դիտարկվել համապատասխան երկրներում Հայկական սփյուռքի ներկայացուցիչների հնարավոր դերակատարումը տնտեսական համագործակցության մեջ: Այնուամենայնիվ, դեսպանությունների աշխատանքը գնահատելիս սրանք կարևոր գործոններ են, որ պետք է հաշվի առնվեն ԱԳՆ կողմից:

Հանրային դիվանագիտություն

Վերջին տասնամյակի ընթացքում համացանցը կարևորագույն դեր է սկսել խաղալ պետությունների արտաքին հարաբերություններում և դեսպանությունների աշխատանքում՝ օժանդակելով նրանց հանրային դիվանագիտության պաշտոնապես չսահմանված մանդատի իրացմանը: Հանրային դիվանագիտությունը առհասարակ դարձել է միջազգային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից մեկը, որի համար օգտագործվում են ինչպես ավանդական միջոցները (օրինակ՝ հանդիպումներ ոչ պաշտոնական դերակատարների հետ, հոդվածներ լրատվամիջոցներում, հանրային միջոցառումներ), այնպես էլ նոր թվային սոցիալական հարթակները: Ընդ որում, վերջիններս հնարավոր են դարձնում տեղեկատվության բազմակի վերարտադրությունն ու շրջանառությունը՝ առավել ինտենսիվ և անմիջական դարձնելով պետությունների և օտարերկրյա լսարանի միջև կապը: Դեսպանությունները կայքերի և սոցիալական ցանցերի միջոցով դեսպանընկալ պետությունների քաղաքացիներին իրազեկում են ինչպես երկկողմանի հարաբերությունների կարևոր զարգացումների, այնպես էլ իրենց երկրների պատմության, առանցքային իրադարձությունների, ազգային տոների, մշակույթի, տնտեսության, ներդրումների, առևտուր անելու, կրթվելու, զբոսաշրջության, համագործակցության հնարավորությունների ու հաջողության պատմությունների մասին: Դիվանագիտական հաղթանակները պայմանավորված են ոչ միայն առանցքային դերակատարների գործոնով և ավանդական դիվանագիտական գործիքակազմի արդյունավետ կիրառմամբ, այլև ժամանակակից հաղորդակցության միջոցների գործարկմամբ: Ուստի և դիվանագետների համար չափազանց կարևոր է հասկանալ այդ նոր մոտեցումների կարևորությունը, ինտերնետի, սոցիալական հարթակների դինամիկան:

Ինտերնետային կայքեր ու կայքէջեր

Դեսպանությունները երբեմն ունենում են առանձին ձևավորված ինտերնետային կայքեր, երբեմն էլ՝ առանձնացված էջեր իրենց պետությունների ԱԳՆ կայքերում: Ինտերնետային կայքը և կայքէջը դիվանագիտական ներկայացուցչությունների համար ծավալուն տեղեկատվության տարածման կարևոր խողովակ են և արխիվացման գործիք: Առավել արդյունավետ լինելու համար կայքը կամ կայքէջը պետք է լինի պարզ, մատչելի, հեշտությամբ կառավարելի և ճկուն: Այն պետք է ճիշտ գործածի բրենդինգը, պատեհաժամ և հստակ ներկայացնի անհրաժեշտ տեղեկատվությունը՝ դրանով նաև նպաստելով հեռախոսային հարցումների կամ այցելությունների կրճատմանը: Դեսպանությունների լավ մշակված և գործարկվող կայքերը կամ էջերը նպաստում են ներկայացվող երկրի թափանցիկության և

դիվանագիտական արդյունավետության վերաբերյալ դրական ընկալմանը դեսպանընկալ պետությունում: Մինչդեռ վատ ձևավորված, դժվար նավարկելի և պարբերաբար չթարմացվող կայքերը/էջերը, կարող են հանգեցնել վստահության նվազմանը՝ ազդելով ինչպես դեսպանության աշխատանքի որակի և ընդհանուր հեղինակության, այնպես էլ տվյալ պետության ինստիտուտների կողմից ընդհանուր ընկալման վրա:

Հավելված 4 ա-ում ներկայացված են ինտերնետային կայքերի և սոցիալական ցանցերի օգտահաշիվների առկայությունը:

Ինտերնետային կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ դեսպանատների մեծ մասն ունեն սեփական կայքեր, որոնք ընդգրկում են տարբեր բաժիններ՝ արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ, հյուպատոսական ծառայություններ, հայ համայնքի գործունեություն և այլ թեմաներ: Այս կայքերը հիմնականում ունեն նույնական ու հարմար կառուցվածք և ներկայացնում են ակնկալվող տեղեկությունը: Այնուամենայնիվ, նկատվել են որոշ թերացումներ, ինչը նվազեցնում է կայքերի օգտակարությունը, ինչպես նաև ընդհանուր բացասական տպավորություն ձևավորում ԱԳՆ աշխատանքի մասին:

Թերացումները ներառում են՝

- *Ետնանկարների անհամապատասխանությունը*. Մեծ Բրիտանիայի, Ռումինիայի և Լեհաստանի դեսպանատների կայքերի ետնանկարները չեն համապատասխանում մեծամասնության պարագայում գործող ձևաչափերին (**Հավելված 4 բ**):
- *Սոցիալական մեդիայի հղումների բացակայությունը*. Ավստրիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Սուրբ Աթոռում, Շվեյցարիայում և Ռումինիայում ՀՀ դեսպանությունների կայքերում առկա չեն ո՛չ ֆեյսբուքյան և ո՛չ թվիթերյան հղումները (**Հավելված 4 գ**): Չեխիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Հունգարիայում ՀՀ դեսպանությունների կայքերում բացակայում են թվիթերյան էջի հղումները, իսկ Իսպանիայի պարագայում ինստագրամի հղումն առկա է, սակայն չի գործում (**Հավելված 4 դ**): Լեհաստանում ՀՀ դեսպանության ֆեյսբուքյան հղումով անցնելիս չես հայտնվում դեսպանության էջում, իսկ Բելգիայում դեսպանության ինտերնետային կայքում դրված է Թվիթերի մի հղում, որը որպես օգտահաշիվ գոյություն չունի:⁷ (**Հավելված 4 ե**):
- *Ծածկույթի երկրների վերաբերյալ բաժինների խառնաշփոթը կամ բացակայությունը*. Անդորրայի վերաբերյալ բաժինն ընդգրկված է Ֆրանսիայում ՀՀ դեսպանության կայքում, մինչդեռ այն Իսպանիայում ՀՀ դեսպանության լիազորությունների տիրույթում է: Եստոնիան և Լատվիան (Վիլնյուսում ՀՀ դեսպանատուն), Իռլանդիան (Մեծ Բրիտանիա) և Իսլանդիան (Ստոկհոլմում ՀՀ դեսպանատուն), Լիխտենշտայնը (Բեռլինում ՀՀ դեսպանատուն) ընդգրկված են այլ դեսպանատների ծածկույթում, սակայն համապատասխան դեսպանատների կայքերում բացակայում են այդ երկրների վերաբերյալ առանձին բաժինները (**Հավելված 4 գ**):
- *Ֆեյսբուքի և Թվիթերի տեղեկության անհամապատասխանություն տարբեր հարթակներում*. Բուլղարիայում ՀՀ դեսպանության ծածկույթում գտնվում է Հյուսիսային Մակեդոնիան, ինչի մասին դեսպանության ֆեյսբուքյան հղումում առկա է, սակայն նշված չէ դեսպանության կայքէջում՝ որպես առանձին բաժին (**Հավելված 4 ե**):

⁷ <https://x.com/armembelgium>

- *Բաժինների անհասանելիություն.* Լեհաստանի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան ինտերնետային կայքի «Երկկողմ հարաբերություններ»⁸ բաժինը հասանելի չէ, ինչը խոչընդոտում է տվյալ երկրի հետ հարաբերությունների մասին տեղեկատվության ապահովմանը (**Հավելված 4 ը**):
- *Տվյալների թարմացման խնդիրներ.* 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ թարմացված չեն եղել հետևյալ երկրների վերաբերյալ տվյալները՝
 - *ԱԳՆ կայքում՝* Նորվեգիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Մալթա, Սան Մարինո, Սուրբ Աթոռ, Մալթայի Ինքնիշխան Ուխտ, Մոնակո, Անդորրա,
 - *ՀՀ դեսպանությունների կայքերում՝* Անդորրա, Իսպանիա, Իտալիա, Մալթա, Սան Մարինո, Մալթայի Ինքնիշխան Ուխտ, Մոնակո, Նորվեգիա, Շվեդիա, Սուրբ Աթոռ:

Բոլոր մյուս երկրների տվյալները թարմացվել են 12.07.2024 թ. տարեթվով, այսինքն՝ 2023 թվականի տվյալները թարմացվել են միայն 2024 թվականի մեկնարկից 7 ամիս անց:

Սոցիալական մեդիայի հարթակներ

Արտաքին հարաբերություններում սոցիալական մեդիա հարթակները դարձել են անփոխարինելի գործիք տարբեր լսարանների հետ աշխատելու, ներգրավելու, ընկալումներ ձևավորելու և դիվանագիտական նպատակներն առաջ մղելու համար: Ժամանակակից աշխարհում դեսպանությունների կողմից սոցիալական մեդիայի ակտիվ կիրառումը ոչ միայն միտում է, այլև ռազմավարական անհրաժեշտություն: Տարբեր հարթակները հնարավորություն են տալիս խթանելու անմիջական «շփումը» դեսպանընկալ պետությունների կառավարության, հաստատությունների, քաղաքացիների, բիզնես հանրության, քաղաքացիական հասարակության, սփյուռքի, երիտասարդության, և արդյունքում՝ բազմաազգարանոց լսարանի հետ: Դրանից զատ, սոցիալական մեդիան ծառայում է որպես ճգնաժամային կառավարման և հյուպատոսական աջակցության կենսական գործիք՝ թույլ տալով դեսպանատներին անհապաղ տարածել արտակարգ իրավիճակների ահազանգերը, աջակցել հյուպատոսական ծառայությունների կազմակերպմանը և, անհրաժեշտության դեպքում, օգնություն առաջարկել արտերկրում գտնվող սեփական երկրի քաղաքացիներին:

Սոցիալական մեդիան անգնահատելի է պետությունները դեսպանընկալ երկրներում ներկայացնելու առումով: Աշխարհագրական խոչընդոտները հաղթահարելով՝ այն հնարավորություն է տալիս դիվանագիտական ներկայացուցչություններին աննախադեպ հասանելիությամբ և անմիջականությամբ ցուցադրել իրենց ազգի արժեքները, մշակույթը և քաղաքականությունը միջազգային լսարանին: Այսօրինակ ներկայացումը նպաստում է առևտրի, զբոսաշրջության, մշակութային փոխանակման և փոխըմբռնման խթանմանը՝ դրանով իսկ առաջ մղելով դիվանագիտական օրակարգերը և ամրապնդելով երկկողմ հարաբերությունները:

Սոցիալական մեդիան ծառայում է իբրև հաղորդակցության բազմակողմանի միջոց՝ իրականացնելով տարբեր գործառնություններ: Դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ ներգրավվածությունն այնպիսի հարթակներում, ինչպիսիք են Ֆեյսբուքը և Թվիթթերը, Ինստագրամը (Instagram) և Լինքդինը (LinkedIn)⁹, կարող է բազմապատիկ անգամ մեծացնել

⁸ Կայքը հասանելի չի եղել ընդհուպ մինչև 13.01.2024 թ.:
⁹ Վերջին երկուսը հետազոտության շրջանակում չեն դիտարկվել:

հանրային դիվանագիտության ջանքերի արդյունավետությունը: Այս հարթակների նպատակային օգտագործումը, պատշաճ և հաճախակի թարմացումները, մամուլի հաղորդագրությունները և պաշտոնական հայտարարությունները ապահովում են հանրության հետ թափանցիկ և մատչելի հաղորդակցություն: Սոցիալական մեդիայի միջոցով դեսպանությունները կարող են ներգրավվել երկկողմանի հաղորդակցության մեջ, ստանալ հետադարձ կապ, լուծել շահագրգիռ կողմերի մտահոգությունները և խթանել երկխոսությունը հիմնական հարցերի շուրջ: Նման ինտերակտիվ մոտեցումը ոչ միայն կխթանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, այլև դրական ազդեցություն կգործի սեփական և դեսպանընկալ երկրների քաղաքացիների ընկալումների վրա՝ դրանով իսկ ամրապնդելով պետության և պետական ինստիտուտների նկատմամբ մարդկանց վստահությունը:

Սոցիալական մեդիան դեսպանություններին նաև հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով իրականացնել հանրային դիվանագիտության մաս կազմող հրապարակային նախաձեռնություններ, ներառյալ՝ միջոցառումներ, մշակութային և կրթական արշավներ: Օգտագործելով մուլտիմեդիա բովանդակությունը (տեսանյութեր, լուսանկարներ և ինֆոգրաֆիկա)՝ դեսպանությունները կարող են հանրամատչելի կերպով ցուցադրել իրենց ժողովրդի հարուստ ժառանգությունը, ավանդույթներն ու նորարարությունները: Սոցիալական մեդիայի օգտագործման ընթացիկ վերլուծությունը դեսպանություններին կարող է արժեքավոր պատկերացում տալ իրենց լսարանի ժողովրդագրության, նախասիրությունների և տրամադրությունների վերաբերյալ՝ հնարավորություն ընձեռելով համապատասխանեցնել հաղորդակցման ռազմավարությունները, և, ըստ անհրաժեշտության, ուղղորդել նպատակային իրազեկումը:

Հավելված 5-ում ներկայացված են Թվիթեր և Ֆեյսբուք սոցիալական հարթակների օգտագործման մեկնարկային տարեթիվը և հրապարակումների թեմատիկ/բովանդակային բաշխումը՝ ըստ նյութերի քանակի: Բովանդակային առումով առանձնացվել ու դիտարկվել են դեսպանի աշխատանքային հանդիպումների լուսաբանումը, ՀՀ ԱԳՆ, ԱԳ նախարարի և մամուլի խոսնակի հայտարարությունների հրապարակումը, 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակումները, հայկական կրոնի, տոների, մշակույթի, սպորտի վերաբերյալ նյութերը և տուրիզմի ու ներդրումների զարգացմանն ուղղված տեղեկությունները: Մնացած նյութերի հաշվարկը մեկտեղված է և ներկայացված մեկ թվով:

Հրապարակումները գրեթե բոլոր դեպքերում նույնական են եղել Ֆեյսբուքում և Թվիթերում: Այդուհանդերձ, հետազոտության ընթացքում ի հայտ են եկել տվյալների հասանելիության սահմանափակումներ, քանի որ թվիթերյան օգտահաշիվների վաղ ժամանակահատվածում կատարված հրապարակումները տեսանելի չեն՝ չնայած դիտարկման փորձեր կատարվել են թե՛ հեռախոսով, թե՛ համակարգչով: Սա թույլ չի տվել լիարժեքորեն վերլուծել թվիթերյան օգտահաշիվների հրապարակումները: Այսպիսի տեխնիկական խոչընդոտները կարևոր է նկատի ունենալ ապագա հետազոտություններում:

Թվիթերյան հարթակում դեսպանությունների հրապարակումների քանակը զգալիորեն տարբերվում է միմյանցից: Եվրոպական խոշոր երկրներում դիվանագիտական ներկայացուցչությունները ցուցաբերում են ավելի մեծ ակտիվություն: Օրինակ՝ Գերմանիայում ՀՀ դեսպանությունը ցուցաբերել է ամենաբարձր ակտիվությունը՝ 362 հրապարակում, մինչդեռ այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Չեխիայում, այն սահմանափակվել է ընդամենը 20 հրապարակմամբ դիտարկման համար հասանելի ժամանակահատվածում:

Սա արտացոլում է առանձին դեսպանությունների անձնակազմի կողմից հանրային դիվանագիտության կարևորության գիտակցումը և նախաձեռնողականությունը, մյուս կողմից՝ հանրային դիվանագիտությանն առնչվող ռազմավարության և կատարվող աշխատանքի նկատմամբ ԱԳՆ վերահսկողության բացակայությունը:

Դեսպանությունների հրապարակումների լեզվական բազմազանությունը նույնպես դիտարկվել է՝ կարևորելով հաղորդակցության հասանելիության հարցը: Բոլոր դեսպանությունների հրապարակումները հիմնականում երկլեզու են՝ հայերեն և անգլերեն տարբերակով, մինչդեռ մի քանի դեսպանությունների հրապարակումները եղել են եռլեզու՝ ներառելով թե՛ հայերեն, թե՛ անգլերեն և թե՛ դեսպանը նկատմամբ պետության լսարանին հասանելի լեզուներ: Այսպես, բացի հայերենից և անգլերենից, Գերմանիայի դեսպանության հրապարակումները կատարվել են գերմաներեն, Ֆրանսիայինը՝ ֆրանսերեն, իսկ Յունաստանինը՝ հունարեն:

Ֆեյսբուքյան հարթակում 33 դեսպանությունների կողմից իրականացվող հրապարակումների հիմնական մասը 33 ԱԳՆ պաշտոնական հայտարարությունների տարածումներն են, որտեղ առավել ակտիվ են եղել Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում դեսպանությունները:

Մնացած հրապարակումների բովանդակությունը ներառում է դիվանագիտական հանդիպումների, մշակութային նախաձեռնությունների և Հայոց ցեղասպանության թեմայի լուսաբանումը: Ներդրումների և տուրիզմի խրախուսման ուղղությամբ ակտիվությունը զգալիորեն պակաս է:

Դեսպանների հանդիպումների լուսաբանման առումով առաջատար են Չեխիայում (232), Գերմանիայում (193), Յունաստանում (181), Իտալիայում (152) և Շվեյցարիայում (148) 33 դեսպանությունները: Թեպետ բովանդակային առումով բարդ է եզրահանգումներ կատարել հանդիպումների արդյունավետության մասին, այնուամենայնիվ դեսպանների հանդիպումների ակտիվությունը ինքնին կարևոր գործոն է հայկական օրակարգը հյուրընկալող պետությունում առաջ մղելու գործում:

Հայկական մշակույթը նույնպես լայնորեն լուսաբանվել է հատկապես Աթենքում (683), Պրահայում (276), Յոնում (263), Վիեննայում (208), Հաագայում (180) 33 դեսպանությունների կողմից:

Շատ երկրներում տուրիզմի վերաբերյալ հրապարակումները ցածր են. առավելագույնը 19 հրապարակում արվել է Մադրիդում, 11-ը՝ Աթենքում, 10-ական՝ Հաագայում, Պրահայում և Բուխարեստում դեսպանությունների կողմից: Բրյուսելում, Ստոկհոլմում, Վարշավայում և Սուրբ Աթոռում դեսպանությունների կայքերում այս թեմայով հրապարակումները բացակայում են:

Որպես հանրային դիվանագիտության դրսևորում օրինակելի է Յունաստանում 33 դեսպան Տիգրան Մկրտչյանի ակտիվությունը, որը տարբեր լրատվամիջոցներում պարբերաբար հանդես է եկել սյունակներով, որոնց միջոցով փորձել է Հայաստանի դիրքորոշումները, արժեքները և քաղաքական ուղերձները հասցնել տեղական ու միջազգային առավել լայն լսարաններին, որոնք նաև տարածվել են սոցիալական մեդիայով:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունը չունի հանրային դիվանագիտության ռազմավարություն, ինչը խնդրահարույց է և արդի աշխարհում ու հարաբերություններում կարող է զգալիորեն սահմանափակել ՀՀ դիվանագիտական կորպուսի աշխատանքի արդյունավետությունը: Այս բացը հանգեցնում է նրան, որ դեսպանությունների կողմից ծավալվող գործողություններն ամբողջությամբ թողնված են դեսպանների և դեսպանատների աշխատակազմերի հայեցողությանը, նախաձեռնողականությանը և ճաշակին, որը հարցականի տակ կարող է դնել արտաքին հարաբերությունների համար պատասխանատու գերատեսչության պրոֆեսիոնալիզմը:

Դեսպանընկալ պետության տեսանելի գործողություններ և արդյունքներ

Դեսպանությունների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման համար առանցքային ցուցիչ է դեսպանընկալ պետության իրավասու կառույցների և բարձրաստիճան պաշտոնյաների արձագանքողականությունը և համերաշխությունը դեսպանությունների երկրների համար կարևոր հարցերում: Դրանք էական նշանակություն ունեն նաև դեսպանընկալ երկրի քաղաքացիների մոտ համապատասխան ճանաչողության, պատկերացումների ու գնահատականների ձևավորման, քաղաքականության ուղղությունների ուրվագծման, փոխհարաբերությունների ու վստահության կառուցման և միջազգային կարևորագույն խնդիրների վերաբերյալ երկրների փոխգործակցության առումով:

Սույն ցուցիչի ներքո գնահատվել են 2020-2023 թվականներին Լեռնային Ղարաբաղի հակամարտության և Հայաստանի հետ կապված առանցքային իրադարձությունների վերաբերյալ տարբեր պետությունների օրենսդիր և գործադիր մարմինների և/կամ դրանց բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչած արձագանքները, որոնք ներկայացված են Հավելված 5 ա և 5 բ-ում:

Հետազոտության արդյունքներով՝ որոշ երկրներ առավել ակտիվ են արձագանքել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը իրենց հայտարարություններով, ինչպես օրինակ՝ Սուրբ Աթոռը (25), Կիպրոսը (20), Գերմանիան (17):

Սուրբ Աթոռը, Կիպրոսը և Ֆրանսիան ակտիվորեն շեշտել են մարդու իրավունքների կարևորությունը, ինչը երևում է նրանց արձագանքներում՝ կապված հայաթափման և շրջափակման հետ:

Տվյալները վկայում են, որ բազմաթիվ երկրներ վերապահումով են վերաբերվել նշված իրադարձություններին: Ավելի շատ դատապարտող հայտարարություններ երկրների օրենսդիր կամ գործադիր մարմինների կողմից եղել են 2020 թ. սեպտեմբերի պատերազմի վերաբերյալ: Մինչդեռ Հայաստանի վրա 2022 թ. հարձակումների և Լեռնային Ղարաբաղի 2023 թ. շրջափակման վերաբերյալ արձագանքների պակասը ցույց է տալիս միջազգային ուշադրության նվազումը կամ անտարբերությունը: Անդորրան, Դանիան, Իռլանդիան, Լիխտենշտայնը, Յուսիսային Մակեդոնիան, Յունգարիան, Մոնակոն, Մոնտենեգրոն, Պորտուգալիան, Սլովենիան և Ֆինլանդիան Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ տեսանելի դիվանագիտական հայտարարություններ չեն արել:

Արձագանքողականության մակարդակի անկումն, ընդհանուր առմամբ, կարող է բացատրվել ՀՀ վերահսկողությունից դուրս գտնվող մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ ռուս-

ուկրաինական պատերազմը կամ իսրայել-պաղեստինյան վերսկսված կոնֆլիկտը: Առանձին երկրների պարագայում դա թերևս կարող է նշանակել սեփական շահերի համատեքստում, տվյալ ինդիքների անկարևորություն, անտարբերություն կամ «դիվանագիտական» զգուշավորության ու «չեզոքության» միտումնավոր դրսևորում:

Այդուհանդերձ, համադրելով այս երկրներում դեսպանությունների կողմից իրականացված տեսանելի աշխատանքի ծավալը, կարելի է եզրակացնել, որ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները առանձնապես ջանք էլ չեն գործադրել հասնելու ավելի բարձր ցուցանիշների, այդ թվում՝ դեսպանընկալ ժողովրդավարական հասարակություններում բարենպաստ հանրային կարծիքի ձևավորման միջոցով:

Մարդկային ռեսուրսներ

Դեսպանությունների արդյունավետ գործունեություն ապահովելու համար առանցքային գործոն են մարդկային ռեսուրսները: Այստեղ կարևոր է ոչ միայն դեսպանի անձնական հատկանիշները, առաջնորդությունը, պրոֆեսիոնալիզմն ու անցած ճանապարհը, այլև դիվանագիտական և ոչ դիվանագիտական աշխատակազմի քանակն ու մասնագիտական կարողությունները:

ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքում բացակայում են դիվանագիտական ներկայացուցչությունների, այդ թվում՝ դեսպանությունների անձնակազմի թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ չնայած, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ, ի թիվս իր գործունեությանն առնչվող այլ տվյալների, հրապարակում է հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները: Տվյալ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե այն պարունակում է պետական գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ արտաքին հարաբերություններին առնչվող որոշ տեղեկություններ դասվում են պետական գաղտնիքի շարքին, եթե դրանց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ ազգային անվտանգությանը կամ շահերին:

ԹԻՀԿ-ի հարցմանն ի պատասխան՝ ԱԳՆ-ն նշել է, որ դիվանագիտական անձնակազմի թիվը չի հրապարակվում՝ հղում անելով ՀՀ վարչապետի 02.04.2021 թվականի թիվ N327-Ա որոշմանը, որը սահմանում է ԱԳՆ աշխատողների (հաստիքների) առավելագույն թիվը, այն է՝ 291: Հարցին, ըստ եռթյան, պատասխան չի տրվել: Միաժամանակ, ԱԳՆ-ն չի նշել, որ հայցվող տեղեկությունը պարունակում է պետական գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն:

ԱԳՆ-ից ստացված արձագանքը ենթադրում է, որ երկրի գործադիր կառույցն իրեն հաշվետու չի համարում հարկատուների առջև այն հարցում, թե ինչ ռեսուրսներով է իրականացնում ՀՀ արտաքին քաղաքականությունը տարբեր երկրներում կամ միջազգային աստիճաններում ՀՀ ներկայացուցչությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ հասարակության վստահության տեսանկյունից:

Արտերկրում աշխատող դիվանագետների անունները, պաշտոնները, գործառույթները, աշխատանքային հեռախոսահամարները և առնչվող գործնական այլ տվյալներ չտրամադրելն անհիմն է, իսկ դրանց բացակայությունը ՀՀ ԱԳՆ և դեսպանությունների կայքէջերում լուրջ խնդիր կարող է ստեղծել այդ երկրներում գտնվող ՀՀ քաղաքացիների համար իրենց հուզող հարցերի շուրջ դեսպանության հետ կապ հաստատելու առումով: Սա բացասաբար է ազդում թե՛ մատուցվող ծառայությունների որակի, և թե՛ դեսպանությունների հեղինակության վրա: Սա իր հերթին ոչ անմիջական (knock on effect) ազդեցություն է ունենում տվյալ երկրում հայ բնակչության՝ դեսպանության շուրջ համախմբվածության և դեսպանության կամ համայնքային կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումների մասնակցության վրա:

Ելնելով դիտարկվող արդյունքային ցուցանիշներից և դեսպանությունների առջև դրված նպատակների և գործառույթների ծավալից՝ հատկապես մի քանի պետություններում ներկայացված լինելու պարագայում, կարելի է եզրակացնել, որ հատկացված մարդկային ռեսուրսներն ամենայն հավանականությամբ չեն բավարարում Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ապահովմանը: Մասնավորապես, Ադրբեջանի ագրեսիվ արտաքին քաղաքականությանը հակազդելու անհրաժեշտությունը պահանջում է ավելի արդյունավետ դիվանագիտական ներկայություն և ռազմավարական մոտեցում: Այս համատեքստում կարևոր է դեսպանությունների ռեսուրսների համաչափ բաշխումը՝ ապահովելով դրանց օպտիմալ օգտագործումը և ազդեցության բարձրացումը միջազգային հարթակներում: Դեսպանություններում մարդկային ռեսուրսների և դրանց անհամաչափ բաշխվածության/սղության կամ գործող դիվանագետների ոչ կոմպետենտության պատճառով աշխատանքի արդյունավետության պակասի խնդիրը ԱԳ նախարարության կադրային քաղաքականության անկատարությունն է, նշանակումների հստակ չափանիշների, սկզբունքների և մեխանիզմի բացակայությունը (ընտրության չափանիշ ֆորմալ նշվում են լեզվի իմացությունը, հյուպատոսական գործի իմացությունը և դիվանագիտական աստիճանը, որոնք երբեմն նույնպես հաշվի չեն առնվում), թափանցիկության պակասը:

Փորձագետների տվյալներով՝ ՀՀ դեսպանությունները ԱԳՆ են ներկայացնում տարեկան հաշվետվություն, որտեղ նշվում է դեսպանության ամբողջ գործունեությունը՝ քաղաքական, տնտեսական կապերի ակտիվացման, փոխադարձ այցերի, դեսպանի և դիվանագետների հանդիպումների, մշակութային միջոցառումների կազմակերպման, Հայաստանի վերաբերյալ ՉԼՄ-ներում հրապարակումների, հյուպատոսական ծառայությունների, դեսպանության կադրային, ֆինանսական և նյութատեխնիկական կարիքների վերաբերյալ: Սա, կարծես թե, համապարփակ փաստաթուղթ է, որի հիման վրա կարելի է տալ գնահատական դեսպանության աշխատանքի վերաբերյալ: Սակայն, միաժամանակ, հաշվետվության լրացման ու ներկայացման մեխանիզմ, գնահատման մեթոդներ և ցուցանիշներ չկան: Դեսպանությունները չեն ստանում իրենց հաշվետվության վերաբերյալ գրավոր գնահատական, չեն բացահայտվում թերությունները: Սա տեղիք է տալիս սուբյեկտիվ և կամայական գնահատականների, չի բերում թերացումների համար հնարավոր բացասական հետևանքների մասին ընկալման և չի մոտիվացնում ավելի արդյունավետ աշխատանքի:

Նյութական ռեսուրսներ

Դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից զբաղեցրած տարածքները զգալի կարևորություն ունեն երկրի միջազգային իմիջի և արդյունավետության համար: Դրանք

պարզապես ֆիզիկական նշանակություն չունեն, այլ հանդիսանում են երկրի ինքնիշխանության խորհրդանիշ և դիվանագիտական շփումների կարևոր հարթակ: Երբ դեսպանությունների տարածքը պատկանում է իրենց պետությանը, դա հաստատում է տվյալ երկրում այդ պետության ամուր ներկայությունն ու ինքնիշխանությունը: Սա ապահովում է գործառնական կայունություն և նվազեցնում է ռիսկերը՝ կապված անշարժ գույքի շուկայի տատանումների կամ տեղական օրենքների որոշ փոփոխությունների հետ: Սեփական տարածքներում գործող դեսպանությունները պաշտպանված են վարձակալության պայմանագրերի կամ տեղական քաղաքական իրավիճակների փոփոխությունից առաջացող անորոշություններից: Սեփականությունը թույլ է տալիս դիվանագիտական ներկայացուցչություններին ազատորեն տնօրինել իրենց տարածքը: Սեփական տարածք ձեռք բերելն անշուշտ մեծ ֆինանսական ծախսեր է պահանջում, սակայն երկարաժամկետ կտրվածքով այն ապահովում է ծախսերի զգալի նվազեցում:

ՀՀ ԱԳՆ-ին ուղղված հարցման պատասխանի վերլուծությունից պարզվել է, որ եվրոպական երկրներում գործող դեսպանատներից՝

- *Նվիրատվությանը ստացված են Բեռլինում գործող դեսպանատունը,¹⁰*
- *պետական բյուջեի միջոցներով գնված/կառուցված են Վիեննայում, Բրյուսելում, Աթենքում, Սոֆիայում, Վարշավայում, Բուխարեստում, Լոնդոնում¹¹ և Փարիզում գործող դեսպանատները,*
- *վարձակալության հիմունքներով են գործում Հաագայում, Մադրիդում, Վատիկանում, Ջեռմում, Վատիկանում Վիլյուսում, Ժնևում, Պրահայում, Ստոկհոլմում և Լյուքսեմբուրգում գործող դեսպանատները:*

Անհասկանալի է, թե ինչ սկզբունքով են սահմանվել կարիքները և գերակայությունները, որ պետությունների պարագայում են պետական միջոցներ հատկացվել՝ ձեռք բերելու սեփականություն հանդիսացող տարածք:

Տեղեկություն չի հայցվել սեփականության կամ վարձակալության իրավունքով տնօրինվող գույքի մեծության, արժեքի և ընթացիկ ծախսերի մասին:

ՀՀ դեսպանությունների ձեռքբերման ու պահպանման ծախսերի, ինչպես նաև տարածքի օպտիմալ օգտագործման դիտարկումը կարևոր է հասկանալու համար, թե որքանով է արդյունավետ ծախսվում Հայաստանի Հանրապետության գույքը և գործնականում ծառայում իր նպատակին:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համադրելով և վերլուծելով եվրոպական ընտրված երկրներում դեսպանությունների կողմից իրականացված տեսանելի աշխատանքի ցուցանիշները և արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտաքին հարաբերությունների գերատեսչությունում առկա չէ ընդհանուր ռազմավարություն և չի իրականացվում դեսպանությունների գործողությունների

¹⁰ Նվիրատուն անհայտ է:

¹¹ Լոնդոնում Հայաստանի Հանրապետության նոր դեսպանության շենքի բացումը տեղի է ունեցել 2023 թվականի սեպտեմբերի 14-ին: Այն գտնվում է Լոնդոնի Քենսինգթոն թաղամասի Չենիստոն Գարդենս 25Ա հասցեում, https://news.am/arm/news/792252.html?utm_source=chatqpt.com

պատշաճ համակարգում: Թեև տրամաբանական և կարևոր է, որ դեսպաններն ունենան առաջնորդության և նախաձեռնողականության որոշակի տիրույթ, Հայաստանի պարագայում՝ նույնիսկ պետության համար կենսական նշանակություն ունեցող իրավիճակներում արտաքին հաղորդակցության ողջ պատասխանատվությունը թողնված է դեսպանների հայեցողությանը, ակտիվությանն ու ճաշակին:

Նաև պարզ չէ, թե ինչ չափանիշներով է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը առհասարակ գնահատում դեսպանությունների կատարողականը, ներառյալ՝ հանդիպումները, դիվանագիտական հաղորդակցությունը, փոխայցելությունների և փոխադարձ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ջանքերը, իրավական փաստաթղթերով ամրագրված համագործակցության իրագործումը, խորհրդարանական կապերը, հանրային դիվանագիտության թիրախները և ջանքերը, Սփյուռքի համայնքների հետ հարաբերությունները, հայաստանյան բիզնեսների հետ կապերը, կազմակերպվող մշակութային և բիզնեսի ոլորտի միջոցառումները և այլն: Մինչդեռ այս ամենի վերաբերյալ տեղեկության հավաքագրումը ԱԳՆ կողմից և օբյեկտիվ չափանիշներով արդյունքների գնահատումը կարող են դարձնել հարաբերություններն արդյունավետ:

Այս խնդրի հիմքերից է արտաքին քաղաքականության իրականացման համապարփակ տեսլականի բացակայությունը, ինչը հանգեցնում է հապաղող գործողությունների, մակերեսային հաղորդակցման և զուտ ձևական ներկայության, հատկապես փոփոխվող անվտանգային միջավայրում: Բացի այդ, առկա չէ հանրային դիվանագիտության նպատակային ռազմավարություն՝ մշակույթի, կրթության, գիտության, ներդրումների և սոցիալ-քաղաքական կապերի խթանման ուղղությամբ: Այս ուղղությամբ դեսպանատները գործում են հատվածական, պասիվ կամ անհամաչափ՝ կախված տվյալ դեսպանության մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներից:

Բացի վերոնշյալ ռազմավարության և համակարգվածության բացակայությունից, խնդիր է նաև թերացումների համար պատասխանատվության հստակ և գործնականում կիրառվող մեխանիզմի բացակայությունը: Արդյունքում՝ դիվանագետները համապատասխան դեսպանություններ գործուղվելուց առաջ բավարար չափով չեն զինվում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ գիտելիքով ու հմտություններով: Ավելին, դեսպանությունների միջև առկա է մարդկային ռեսուրսների անհամաչափ բաշխում. որոշ դեպքերում դիվանագետների թվաքանակը չի համապատասխանում առաջադրանքների ծավալին, իսկ այլ դեպքերում բացակայում է ոչ դիվանագիտական՝ մասնագիտացված անձնակազմ, որը կարող է նպաստել, օրինակ, թվային հաղորդակցության և հանրային դիվանագիտության դրակյալ իրականացմանը:

Վերլուծության արդյունքում վեր հանված հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում, որը կօժանդակի Հայաստանի ինտեգրմանը միջազգային դիվանագիտական միջավայրում: Դիվանագիտական ներկայացուցչությունները ունակ են պատշաճ ներկայացնել Հայաստանը և պաշտպանել նրա շահերը միջազգային ասպարեզում, եթե նրանք ունենան պետության արտաքին քաղաքականության լիարժեք ընկալում և անհրաժեշտ պայմաններ ու գործիքակազմ:

Ստորև ներկայացվում են մի շարք առաջարկություններ, որոնք նպատակաուղղված են Հայաստանի դիվանագիտական համակարգի արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը՝ միաժամանակ ապահովելով արդիական պահանջներին համապատասխան կառավարման համակարգի ձևավորում:

Այս բարեփոխումների իրականացումը հնարավորություն կտա ստեղծել համակարգված և բաց արտաքին հարաբերությունների մոդել, որը ոչ միայն կուժեղացնի միջպետական, տնտեսական և մշակութային կապերը, այլև կամրապնդի Հայաստանի հեղինակությունը միջազգային հարթակներում:

Արտաքին քաղաքականության ռազմավարության ձևավորում և գնահատման համակարգի ներդրում

1. Հստակեցնել արտաքին քաղաքականության նպատակներն ու առաջնահերթությունները՝ սահմանելով առաջընթացի չափման ցուցանիշներ:
2. Ներդնել նպատակային ռազմավարություն՝ ուղղված դեսպանընկալ պետություններում Հայաստանի Հանրապետության նկատմամբ հետաքրքրության ամրապնդմանը, վստահելի հարաբերությունների հաստատմանը առանցքային պետական և ոչ պետական դերակատարների հետ, Հայաստանի շահերի հետևողական առաջխաղացմանը:
3. Ռազմավարությամբ նախատեսել հանրային դիվանագիտության առանձին ուղղություն և միջոցառումներ՝ նպաստելու Հայաստանի համար առանցքային արժեքների, սկզբունքների, դիրքորոշումների և նարատիվների/խոսույթների ակտիվ ու հետևողական առաջխաղացմանը՝ այդ թվում մշտական աշխատանք տանելով տեղական քաղաքական գործիչների, լրագրողների, վերլուծական կենտրոնների, ինչպես նաև հանրային կարծիք ձևավորող կարևոր դերակատարների հետ՝ ապահովելով վերջիններիս տեղեկացվածությունն ու ներգրավվածությունը Հայաստանի արտաքին քաղաքականությամբ պայմանավորված առանցքային հարցերի քննարկումներում ու հրապարակային արտահայտվող կարծիքներում:
4. Մշակել դեսպանությունների կատարողականի մոնիտորինգի և գնահատման պլան և արդյունքային ցուցանիշներ, որի հիման վրա պարբերաբար (այդ թվում՝ դեսպանությունների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունների հիման վրա) գնահատել ՀՀ դեսպանությունների և ԱԳՆ առնչվող ստորաբաժանումների գործունեությունը, ինչը թույլ կտա ինչպես արձանագրել արդյունավետ աշխատանքը, այնպես էլ արագ արձագանքել համակարգային թերացումներին՝ ընդհուպ գնահատելով առանձին երկրներում դեսպանություն ունենալու նպատակահարմարությունը:
5. Մոնիտորինգի շրջանակում նախատեսել դեսպանությունների կատարողականի ընթացիկ վերահսկողության մեխանիզմներ, դիցուք՝ եռամսյակային, իսկ որոշ արտակարգ (օրինակ՝ ռազմական էսկալացիա) իրավիճակներում՝ ընդհուպ շաբաթական հաշվետվությունների հիման վրա:
6. Ձևավորել միջպետական պայմանագրերի իրականացման վերահսկողության մեխանիզմներ՝ հետամուտ լինելու և գնահատելու փաստաթղթերի իրականացման ընթացքը, արդյունավետությունը և, ըստ անհրաժեշտության, վերանայելու դիվանագիտական հետագա գործողությունները:

Դիվանագիտական հարթակների թվային կառավարման և հանրային հաղորդակցության զարգացում

7. Միասնականացնել դեսպանությունների կայքերի կառուցվածքը և ոճը:
8. Մի քանի երկիր ծածկող դեսպանությունների կայքերում ապահովել առանձին բաժին յուրաքանչյուր երկրի համար:
9. Հնարավորինս ապահովել տվյալ երկրում մայրենի/գործածական լեզվի կիրառումը սոցիալական հարթակներում:
10. Ապահովել տեխնիկական խնդիրների արագ արձագանքում, բովանդակության արդիականացում, թարմացումների հաճախականության գնահատում և դիտումների վիճակագրական վերլուծություն:
11. Դեսպանությունների կայքերում տեղադրել հղումներ դեպի սոցիալական մեդիայի պաշտոնական հարթակներ՝ ապահովելով տվյալների պահպանում, արխիվացում:
12. Ապահովել մանրամասն և արդիական տեղեկատվություն՝ հանդիպումների, ստորագրված համաձայնագրերի, դրանց իրականացման ընթացքի, մշակույթի, Հայաստանի կարևոր իրադարձությունների, զարգացումների վերաբերյալ:
13. Կայքում ներկայացնել մարդկային պատմություններ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում Հայաստանի և ընդունող երկրի ականավոր գործիչների՝ երկկողմանի, ոչ պարտադիր դիվանագիտական, հասարակական արդյունավետ շփումների հաջողության պատմությունները:

Մարդկային ռեսուրսների կառավարում

14. Վերլուծել ներկայիս մարդկային ռեսուրսների բաշխվածությունը, կարողություններն ու ծանրաբեռնվածությունը՝ այն համապատասխանեցնելով պետությունների կարևորության, դեսպանությունների ծածկույթի և գործունեության ծավալին՝ ապահովելու արդյունավետ համագործակցություն, ինչպես նաև հակազդելու հակահայ քարոզչությանը, ապատեղեկատվությանը, ինչպես նաև իրականացնելու օժանդակ գործառույթներ, այդ թվում՝ դեսպանությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն:
15. Հրապարակել դիվանագիտական և վարչական անձնակազմի թվային տվյալները կամ հստակորեն հիմնավորել, թե տեղեկատվության սահմանափակումը ինչ ռիսկեր է պարունակում Հայաստանի ազգային շահերի տեսանկյունից:
16. Իրականացնել պարբերական վերապատրաստումներ ռազմավարական պլանավորման, այդ թվում՝ մոնիտորինգի և գնահատման, հանրային հաղորդակցության և թվային գործիքների կիրառման ոլորտներում:

Ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ

17. Ստեղծել սփյուռքահայ համայնքի ներգրավման հարթակներ՝ նպատակ ունենալով առաջ մղել, խթանել, ակտիվացնել Հայաստանի հանրային դիվանագիտությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Երկիր	Այցելություններ դեսպանընկալ երկրներ			Այցելություններ Հայաստան		
	Այցերի ընդհանուր քանակ	Այցերի քանակ 2018-2023 թթ.	Տոկոսային հարաբերակցություն	Այցերի ընդհանուր քանակ	Այցերի քանակ 2018-2023 թթ.	Տոկոսային հարաբերակցություն 2018-2023 թթ.
Ալբանիա	2	0		0	0	
Անդորրա	-	-		-	-	
Ավստրիա	17	4	23.5 %	5	1	20 %
Բելգիա	25	5	20 %	6	1	16.6 %
Բոսնիա և Հերցեգովինա	1	0		1	0	
Բուլղարիա	10	2	20 %	11	2	18 %
Գերմանիա	35	9	25.7 %	11	4	36.3 %
Դանիա	3	1	33.3 %	1	0	
Էստոնիա	8	1	12.5 %	7	1	14.2 %
Իռլանդիա	-	-		-	-	
Իսպանիա	-	-		-	-	
Իսպանիա	4	1	25 %	2	0	
Իտալիա	17	4	23.5 %	5	3	60 %
Լատվիա	11	1	9 %	7	0	
Լեհաստան	23	4	17.39 %	13	1	7.7 %
Լիխտենշտայն	-	-		-	-	
Լիտվա	17	5	29.4 %	16	5	31.25 %
Լյուքսեմբուրգ	6	2	33.3 %	4	2	50 %
Խորվաթիա	3	0		3	1	33.3 %
Կիպրոս	13	3	23 %	10	1	10 %
Հյուսիսային Մակեդոնիա	-	-		-	-	
Հունաստան	17	3	17.6 %	11	3	27.2 %
Հունգարիա	6	0		3	1	33.3 %
Մալթա	1	1	100 %	1	1	100 %
Մալթայի Ինքնիշխան Ուխտ	2	1	50 %	1	0	
Մեծ Բրիտանիա	24	6	25 %	11	3	27.27 %
Մոնակո	-	-		-	-	
Նիդերլանդներ	9	2	22.2%	5	1	20 %
Նորվեգիա	2	0		6	1	16.6 %
Շվեդիա	10	3	30 %	7	3	42.8 %
Շվեյցարիա	23	6	27.27 %	5	0	
Չեխիա	12	2	16.7%	12	1	8.3 %
Չեռնոգորիա	1	0		2	1	50 %
Պորտուգալիա	4	2	50 %	2	0	
Ռումինիա	22	1	4.55 %	16	3	18.75 %
Սան Մարինո	-	-		-	-	
Սերբիա	6	1	16.7 %	8	1	12.5 %
Սլովակիա	9	2	22 %	9	3	33 %
Սլովենիա	3	1	33.3 %	2	1	50 %
Սուրբ Աթոռ	13	2	15.4 %	14	3	21.4 %
Ֆինլանդիա	7	0		7	0	
Ֆրանսիա	64	20	31.25 %	17	8	47 %

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Երկիր	Կնքված պայմանագրեր 1991 թ.-ից ի վեր	Կնքված պայմանագրեր 2018-2023 թթ.	Տոկոսային հարաբերակցություն
Ալբանիա	5	2	40 %
Անդորրա	1	0	
Ավստրիա	22	2	9 %
Բելգիա	6	2	33.3 %
Բոսնիա և Հերցեգովինա	1	0	
Բուլղարիա	68	5	7 %
Գերմանիա	69	- ¹² (1)	
Դանիա	7 + 1 ¹³		
Էստոնիա	13 + 1 ¹⁴		
Իռլանդիա	-	-	
Իսլանդիա	-	-	
Իսպանիա	10	-	
Իտալիա	37 + 1 ¹⁵	-	
Լատվիա	22	-	
Լեհաստան	10	1	10 %
Լիխտենշտայն	1	0	
Լիտվա	24 + 2 ¹⁶	3	12.5 %
Լյուքսեմբուրգ	5 + 1 ¹⁷	1	16.6 %
Խորվաթիա	5	1	20 %
Կիպրոս	30 + 2 ¹⁸	2	6 %
Յուսլիային Մակեդոնիա	-	-	
Յունաստան	50 + 1 ¹⁹	2	4 %
Յունգարիա	-	1	

¹² ՀՀ ԳԸՀ ինտերնետային կայքում ԳԴՀ-ի հետ իրավապայմանագրային փաստթղթերը ոչ բոլորն են թվագրված, ինչը խրթին է դարձնում ուսումնասիրությունը, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>

¹³ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2023 թվականի պատկերված առկա է «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Դանիայի Թագավորության Կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին»:

¹⁴ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2018 թվականի պատկերված առկա է «Արձանագրություն Հայաստանի Հանրապետության Կառավարության և Էստոնիայի Հանրապետության Կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեզիդենտների) մասին համաձայնագրի» կիրարկման մասին», ուժի մեջ է մտել 2018 թ. մարտի 8-ին:

¹⁵ Միակն է, որ ցանկով ներթելելու հնարավորություն կա, բայց այնուամենայնիվ թվագրումները կայքում ներառված չեն, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2023 թվականի պատկերված առկա է «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելու մասին», ուժի մեջ է մտել 2023 թ. հոկտեմբերի 18-ին:

¹⁶ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2018 թվականի պատկերված առկա է «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության և Լիտվայի Հանրապետության Ներքին գործերի նախարարության միջև՝ ֆիզիկական կրթության եվ սպորտի բնագավառներում համագործակցության մասին», ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 17-ին:

«Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Լիտվայի Հանրապետության Սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության միջև՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում համագործակցության մասին», ուժի մեջ է մտել 2018թ. մարտի 8-ին:

¹⁷ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2019 թվականի պատկերված առկա է «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին»:

¹⁸ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2019 թվականի պատկերված առկա է Համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կիպրոսի Հանրապետության Կառավարության միջև՝ երկու պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսում ստանալու և ուսումը շարունակելու նպատակով բարձրագույն կրթության ակադեմիական որակավորումների փոխադարձ ճանաչման մասին»:

¹⁹ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2019 թվականի պատկերված առկա է Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության և Յունաստանի Հանրապետության Գյուղի զարգացման և պարենի նախարարության միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին:

Մայթայի Ինքնիշխան Ուխտ	2 + 1 ²⁰	1	
Մայթա	5	2	40 %
Մեծ Բրիտանիա	12		
Մոնակո	1	0	
Նիդերլանդներ	14		
Նորվեգիա	5		
Շվեդիա	6	1	16.6 %
Շվեյցարիա	14 + 2 ²¹	2	
Չեխիա	23 + 2 ²²	0	
Չեռնոգորիա	0	0	
Պորտուգալիա	4		
Ռումինիա	45	2	4.4 %
Սան Մարինո	1	-	
Սերբիա	9	0	
Սլովակիա	14 + 1 ²³	1	
Սլովենիա	9 + 1 ²⁴	1	
Սուրբ Աթոռ	3		
Ֆինլանդիա	4	0	
Ֆրանսիա	16 + 1 ²⁵	2	11.7 %

²⁰ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2020 թվականի պանակում առկա է Համագործակցության համաձայնագիր Երուսաղեմի Սբ. Զովհաննեսի, Զոռոսի և Մայթայի Ինքնիշխան Մարտական Բարեխնամ Ուխտի և Հայաստանի Հանրապետության միջև:

²¹ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2018 և 2023 թվականի պանակում առկա են Արձանագրություն ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ զազերի եվ մանրէաբանական պատերազմի միջոցների օգտագործման արգելման մասին, Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

²² Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2018 և 2020 թվականի պանակում առկա են Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ, Արձանագրություն Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի կիրարկման մասին:

²³ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2022 թվականի պանակում առկա է Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սլովակիայի Հանրապետության Կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին:

²⁴ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2018 թվականի պանակում առկա է Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սլովենիայի Հանրապետության Կառավարության միջև ուղեվորների եվ բեռների՝ միջազգային ճանապարհային փոխադրումների մասին:

²⁵ Կայքում ներառված չէ, սակայն առանձին «Միջազգային պայմանագրեր»-ում 2020 թվականի պանակում առկա է Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության միջև՝ «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրի կիրարկող արձանագրություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Երկիր	Արտահանում			Ներմուծում		
	Ծավալը (հազ. ԱՄՆ դոլար) 2019 թ.	Ծավալը (հազ. ԱՄՆ դոլար) 2023 թ.	Տոկոսային հարաբերակց ություն	Ծավալը (հազ. ԱՄՆ դոլար) 2019 թ.	Ծավալը (հազ. ԱՄՆ դոլար) 2023 թ.	Տոկոսային հարաբերակցու թյուն
Ալբանիա	2.4	5.8	↗ 241.6 %-ով	1746.3	1338.0	↘ 76.6 %-ով
Անդորրա	-	-	-	28.1	38.8	↗ 138.07 %-ով
Ավստրիա	3484.8	1252.2	↘ 35.9 %-ով	34042.0	81299.0	↗ 238.8 %-ով
Բելգիա	44470.9	94606.8	↗ 212.7 %-ով	45805.3	58131.6	↗ 126.9 %-ով
Բոսնիա և Հերցեգովինա	-	-	-	432.1	737.7	↗ 170.7 %-ով
Բուլղարիա	207412.6	97413.7	↘ 46.96 %-ով	30841.8	42445.9	↗ 137.65 %-ով
Գերմանիա	69617.0	87557.6	↗ 125.77 %-ով	383707.4	549945.2	↗ 143.3 %-ով
Դանիա	912.8	196.3	↘ 21.5 %-ով	8130.9	18262.9	↗ 224.6 %-ով
Էստոնիա	596.8	951.3	↗ 159.4 %-ով	909.4	3924.7	↗ 431.57 %-ով
Իռլանդիա	67.1	55.4	↘ 82.5 %-ով	11663.5	18008.7	↗ 154.4 %-ով
Իսլանդիա	-	1.7		1455.8	1372.5	↘ 94.27 %-ով
Իսպանիա	650.1	7856.6	↗ 1208.5 %-ով	35369.3	80137.7	↗ 226.5 %-ով
Իտալիա	59687.0	64059.1	↗ 107.3 %-ով	205119.2	353478.2	↗ 172.3 %-ով
Լատվիա	4392.0	6253.6	↗ 142.39 %-ով	3625.4	5807.7	↗ 160.19 %-ով
Լեհաստան	2020 թ. ²⁶ 12015.6	18376.9	↗ 152.94 %-ով	2020 թ. 39387.9	138745.2	↗ 352.25 %-ով
Լիխտենշտայն	21.0	-		681.2	1118.6	↗ 164.2 %-ով
Լիտվա	3279.3	22667.7	↗ 691.23 %-ով	5348.6	7469.0	↗ 139.64 %-ով
Լյուքսեմբուրգ	1004.375	22.0	↘ 2.1 %-ով	1215.58	932.4	↘ 76.7 %-ով
Խորվաթիա	254.8	175.4	↘ 68.8 %-ով	732.5	3108.9	↗ 424.4 %-ով
Կիպրոս	68.1	6933.2	↗ 10180.9 %-ով	811.6	1164.5	↗ 143.4 %-ով
Հյուսիսային Մակեդոնիա	-	0.1	-	1110.9	3148.8	↗ 283.44 %-ով
Հունաստան	442.9	3539.2	↗ 799.09 %-ով	17585.7	53807.4	↗ 305.9 %-ով
Հունգարիա	-	-		-	-	
Մայթայի Ինքնիշխան Ուխտ	-	-		-	-	
Մայթա	22.1	37.4	↗ 169.2 %-ով	58.2	373.8	↗ 642.2 %-ով
Մեծ Բրիտանիա	4503.5	5819.7	↗ 129.2 %-ով	75164.9	107185.5	↗ 142.6 %-ով
Մոնակո	1.0	0.8	↘ 80 %-ով	5.1	12.5	↗ 245.09 %-ով
Նիդերլանդներ	153851.3	234133.6	↗ 152.18 %-ով	40009.0	60699.3	↗ 151.71 %-ով
Նորվեգիա	10.9	11.7	↗ 107.3 %-ով	2257.7	5504.8	↗ 243.82 %-ով
Շվեդիա	940.2	1151.8	↗ 122.5 %-ով	20355.3	40251.0	↗ 197.7 %-ով
Շվեյցարիա	457859.0	83337.4	↗ 18.20 %-ով	53768.2	41827.6	↘ 77.79 %-ով
Չեխիա	2020 թ. 2730.8	2873.8	↗ 105.2 %-ով	2020 թ. 22118.5	41315.4	↗ 186.8 %-ով

²⁶ Աղյուսակում ընդգծված տարեթվի տվյալները համապատասխան երկրի դեպքում բացակայում են:



Չեռնագործիա	-	4126.3		29.1	216.7	↗ 744.7 %-ով
Պորտուգալիա	420.3	179.4	↘ 42.68 %-ով	7561.5	12099.0	↗ 160 %-ով
Ռումինիա	137.6	2022 թ. 196.9	↗ 143.1 %-ով	15023.3	2022 թ. 28991.9	↗ 193 %-ով
Սան Մարինո	-	-		45.5	713.8	↗ 1568.79%-ով
Սերբիա	36.5	2587.2	↗ 7088.2%-ով	2409.2	10722.5	↗ 445.06 %-ով
Սլովակիա	398.8	2022 թ. 24455.0	↗ 6132.14%- ով	8474.5	2022 թ. 15221.3	↗ 179.6%-ով
Սլովենիա	40.4	1420.2	↗ 3515.3 %-ով	11493.9	17305.9	↗ 150.6%-ով
Սուրբ Աթոռ	-	-		-	-	
Ֆինլանդիա	63.7	263.6	↗ 413.8 %-ով	21226.2	43588.1	↗ 205.35 %-ով
Ֆրանսիա	8759.6	9522.9	↗ 108.7 %-ով	84198.0	167412.3	↗ 198.83%-ով

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ա

Երկիր	ՀՀ դեսպանությունների ինտերնետային կայքի անկայություն	Օգտահաշվի անկայություն Ֆեյսբուք սոցիալական հարթակում	Օգտահաշվի անկայություն Թվիթեր սոցիալական հարթակում
Ալբանիա	https://greece.mfa.am/hy/bilateral-al/	https://www.facebook.com/armembgr?locale=hi_IN	https://x.com/armembgr
Անդորրա	https://france.mfa.am/hy/bilateral-ad/	https://www.facebook.com/EmbajadadeArmenia/?locale=hy_AM	https://x.com/ArmEmbMadrid
Ավստրիա	https://austria.mfa.am/hy/	https://www.facebook.com/ArmAustriaEmbassy/?locale=hy_AM	https://x.com/ARMEmbVienna
Բելգիա	https://belgium.mfa.am/hy/	https://www.facebook.com/EmbArmeniaBrussels	https://x.com/ArminBXL
Բոսնիա և Հերցեգովինա	https://cz.mfa.am/hy/bilateral-ba/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Բուլղարիա	https://bulgaria.mfa.am/hy/	https://www.facebook.com/ArmeniainBulgaria	https://x.com/ArmEmBulg
Գերմանիա	https://germany.mfa.am/hy/	https://www.facebook.com/ArmeniaBerlin/?locale=hy_AM	https://x.com/armembgermany
Դանիա	https://sweden.mfa.am/hy/bilateral-dk/	https://www.facebook.com/armembsweden/?locale=hy_AM	https://x.com/armembsweden
Եստոնիա	-	https://www.facebook.com/armemblit	https://x.com/armemblit
Իռլանդիա	-	https://www.facebook.com/ArmeniaInUK	https://x.com/armembuk
Իսլանդիա	-	https://www.facebook.com/armembsweden/?locale=hy_AM	
Իսպանիա	https://spain.mfa.am/hy/	https://www.facebook.com/EmbajadadeArmenia/?locale=hy_AM	https://x.com/ArmEmbMadrid
Իտալիա	https://italy.mfa.am/hy/	https://www.facebook.com/HayastaniDespanutyun/?locale=hy_AM	https://x.com/AmbArmenia
Լատվիա	-	https://www.facebook.com/armemblit	https://x.com/armemblit
Լեհաստան	https://poland.mfa.am/hy/	https://www.facebook.com/embassyofarmeniainpoland/	https://x.com/armembwarsaw
Լիխտենշտայն	-	https://www.facebook.com/ArmeniaBerlin/?locale=hy_AM	https://x.com/armembgermany
Լիտվա	https://lithuania.mfa.am/hy/	https://www.facebook.com/armemblit	https://x.com/armemblit
Լյուքսեմբուրգ	https://belgium.mfa.am/hy/bilateral-lu/	https://www.facebook.com/EmbArmeniaBrussels	https://x.com/ArminBXL
Խորվաթիա	https://cz.mfa.am/hy/bilateral-hr/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Կիպրոս	https://greece.mfa.am/hy/bilateral-cy/	https://www.facebook.com/armembgr?locale=hi_IN	https://x.com/armembgr
Հյուսիսային Մակեդոնիա	-	https://www.facebook.com/ArmNorthMacedonia/?locale=hi_IN&_rd	https://x.com/ArmNMacedonia
Հունաստան	https://greece.mfa.am/hy/	https://www.facebook.com/armembgr?locale=hi_IN	https://x.com/armembgr
Հունգարիա	https://hungary.mfa.am/hy/	https://www.facebook.com/armembhu	-
Մալթայի Ինքնիշխան Ուխտ	https://vatican.mfa.am/hy/bilateral-mb/	https://www.facebook.com/ArmembassytoHollySee/?locale=hy_AM	https://x.com/armembholysee
Մալթա	https://italy.mfa.am/hy/bilateral-mt/	https://www.facebook.com/HayastaniDespanutyun/?locale=hy_AM	https://x.com/AmbArmenia

Մեծ Բրիտանիա	https://uk.mfa.am/hy/	https://www.facebook.com/ArmenianInUK	https://x.com/armembuk
Մոնակո	https://france.mfa.am/hy/bilateral-mc/	https://www.facebook.com/ambassadearmenie/?locale=hy_AM	https://x.com/armembfrance
Նիդերլանդներ	https://netherlands.mfa.am/hy/	https://www.facebook.com/armembnl	https://x.com/armembnl
Նորվեգիա	https://sweden.mfa.am/hy/bilateral-no/	https://www.facebook.com/armembsweden/?locale=hy_AM	https://x.com/armembsweden
Շվեդիա	https://sweden.mfa.am/hy/	https://www.facebook.com/armembsweden/?locale=hy_AM	https://x.com/armembsweden
Շվեյցարիա	https://switzerland.mfa.am/hy/	https://www.facebook.com/Armembswiss/	https://x.com/armembsuisse
Չեխիա	https://cz.mfa.am/hy/bilateral-ba/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Չեռնոգորիա	https://cz.mfa.am/hy/bilateral-me/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Պորտուգալիա	https://vatican.mfa.am/hy/bilateral-pt/	https://www.facebook.com/ArmembassytoHollySee/?locale=hy_AM	https://x.com/armembholysee
Ռումինիա	https://romania.mfa.am/hy/	https://www.facebook.com/armenianembassybucharest	https://x.com/armembro
Սան Մարինո	https://italy.mfa.am/hy/bilateral-sm/	https://www.facebook.com/HayastaniDespanutyun/?locale=hy_AM	https://x.com/AmbArmenia
Սերբիա	https://cz.mfa.am/hy/bilateral-rs/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Սլովակիա	https://austria.mfa.am/hy/bilateral-sk/	https://www.facebook.com/ArmAustriaEmbassy/?locale=hy_AM	https://x.com/ARMEmbVienna
Սլովենիա	https://cz.mfa.am/hy/bilateral-si/	https://www.facebook.com/ArmenianEmbassyPrague	https://x.com/ArmEmbCz
Սուրբ Աթոռ	https://vatican.mfa.am/hy/	https://www.facebook.com/ArmembassytoHollySee/?locale=hy_AM	https://x.com/armembholysee
Ֆինլանդիա	-	https://www.facebook.com/armembsweden/?locale=hy_AM	https://x.com/armembsweden
Ֆրանսիա	https://france.mfa.am/hy/	https://www.facebook.com/ambassadearmenie/?locale=hy_AM	https://x.com/armembfrance

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ք



ՀԱՎԵԼՎԱԾ 4 գ


English Հայերեն Deutsch



Ավստրիայում Հայաստանի
ղեսպանություն



English Հայերեն Italiano



Իտալիայում Հայաստանի
ղեսպանություն



English Հայերեն Italiano



Սուրբ Աթոռում Հայաստանի
Հանրապետության զեսպանություն



English Հայերեն Français



Շվեյցարիայում ՀՀ զեսպանություն և
Ժնևի ՄԱԿ գրասենյակում ՀՀ
մշտական ներկայացուցչություն



ՀԱՎԵԼՎԱԾ 4 դ



← ↻ 🔒 https://www.instagram.com/armembmadrid/ 🏠 🔍 ☆ 📄 ⌵ 🌐

Instagram

Log In

Sign Up

✕ By continuing, you agree to Instagram's Terms of Use and Privacy Policy.






Something went wrong




There's an issue and the page could not be loaded.

Reload page

ՀԱՎԵԼՎԱԾ 4 Ե




Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպանություն

Դեսպանություն

Հայաստան

Արտաքին քաղաքականություն

Երկկողմ հարաբերություններ

Հյուպատոսական ծառայություն

Տեղեկատվություն

Հայ համայնք

ՄՈՆԿԻ

ԱՆԴՈՐՐԱ

ԱՆԴՈՐՐԱ

Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանի Հանրապետության և Անդորրայի Իշխանապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 2003թ. նոյեմբերի 18-ին:

